Մովսէս, որուն սիրտը կը տրուիէր Իսրայէլի ժողովուրդին բարօրութեանը համար, տեսնելով որ՝ բռնաւորներու բռունցքին տակ կը հեծէ գրեթէ ամբողջ ժողովուրդը: Չայն այդ անտանելի լուծէն ազատելու մտադրութեամբ կը հաստատէ, մասնաւոր կանոնագրութիւններով, օրէնսդրութեամբ եւ սրտառուջ ծէսերով **Յիսնամուսկ Գրեյեանի Տօքը**, իրաւամբ արժանանալով Իսրայէլի ամբողջ ցեղին խորունկ երախտագիտութեան, ըլլալով միանգամայն անոնց սլաշտամուների առարկան:

Յորելեանը՝ բոլոր ընկճուածներուն բաղձալի **վեհասօֆն** էր, որ կը կատարուէր՝ **Տօքն անգամ կօքը**.— եւ տօնակատարութեան այդ ամբողջ տարին ալ միասին հաշուելով.— մէն մի յիսուն տարին անգամ մը:

Յորելեանը կը հռչակուէր, Իօբելի աւետարան հնչումով:

Եհովայի՝ Սինայի բարձունքէն որոտացող ժայնէն վերջ, Իօբելի հնչումն էր որ կը զողացնէր ծոր ու լեռ, տրտմութեամբ ու տխրութեամբ համակելով բոլոր անիրաւ բռնաւորները, որք շարունակ քառասուն եւ ինը տարի կեղերած էին անընդհատ խեղճ ժողովուրդը, եւ այժմ՝ զինաթափ, Իօբելի պատգամին առջեւ կը խոնարհին ծնրաղիր:

«Ակն՝ ընդ ական»ի, օրէնսդիրը յորելեանի արդարութեան, զթութեան, հաւասարութեան այս գերազանցօրէն մարդկային տօնին սահմանումով, դարերու դատաստանին առջեւ կը ներկայանայ աւելի պարզերես:

**Մովսէս Իսրայէլի Մեծ Մարգարէն**.— Երախտագէտ Իսրայէլացին, Մովսէսը ճշմարտիւ կը դաւանի իր ամենամեծ Մարգարէն, անունը քանդակելով իր լանջքի տախտակին վրայ:

Իսրայէլացի ժողովուրդը, Յորելեանական սըրբազան տօրիքին սեմը այնինչ թեւակոխած, կը դադրի այլեւ բոլոր աշխարհիկ մտածումներէ եւ զբաղումներէ: Մարմնով՝ մարբուած, հոգիով՝ սըրբ-

րուած, եւ իր տօնական ամէնէն շքեղ, ու մարուր հագուստները հագած, ճակատին շուրջ մշտադալար տերիւններով, եւ ճաղիկներով պատկուած, կազմ ու պատրաստ. այս նախապատրաստական կարգադրումները կը տեւէին ինը օր, ու տասներորդ երջանիկ առաւօտուն, **օր մեծի քառօրեան**, կը հնչէր ահա՛, **Մեծ-ժողովին հրամանով, արծարապատ** Իօելը:

Յօրելեանական տարւոյն գեղեցիկ յոյսովն է որ սերունդին մեծը ընտանեկան պատկառելի Մայր-տօմարին մէջ, օրը օրին կ'արժանագրէ, կը պատրաստէ ճշգրիտ, եւ մանրակրկիտ կերպով բնտանիրին պատմութիւնը, կը նշանակէ ազգակցական կապերը, մեծ խնամով կ'արժանագրէ՝ սերնդապատկան կալուածները, ինչքերը, կահն ու կարասին, իսկական ճշգրիտ պատկերովը:

**Քննանկան եւ Ազգագրական պատմութեանց կարեւորութիւնը.** — Ճիւղագրական մանրագնին պատմութիւնները, ամէնէն աննշան մանրամասնութիւններով ճօրացած, ունին իրենց բազմակողմանի օգուտները:

Այն, երբեմն, զարմանալի կերպով կուզայ ծառայութիւն մատուցանել ցեղին պատմագրութեան, լրացնելով, ճօխացնելով, մշղիլով, լուսարանելով պատմիչին աչքէն վրիպած կարեւոր կէտ մը:

Ընտանեկան ժառանգական հարցին րանալին կը մնար այն, եւ կ'ըլլար այդ սերունդին **օսկւմաս-** **եանը:**

Ամէն ազգէ աւելի, Հրէից մէջ աւագ կարեւորութիւն ստացած էր ճիւղագրութեան հարցը, որքան անտեսուած, նայնիակ բոլորովին զանց առնուած մեր մէջ, Ընտանեկան այդ տօմարին էջերուն, չէր բաւականացուեր չոր ու ցամաք անուններու արժանագրութեամբ, այլ հոն՝ ընտանիրին կալուածը շարժական անշարժ գոյքը, իրենց մանրամասն սահմանագծումներով, արժէքներով, գիտական տուեալներով կը նկարուէր կը նկարագրուէր, այնպէս որ երբ արդար դատաստանի, Յօրելեանի փողն հնչէր, ամէն ընտանիքի պետ, ընտանեկան տօմարը անութիւն կը ներկայանար մեծ եւ անաչառ ժողովին, եւ վաւերական փաստերով, պաշտօնական թուղթերով կը հաստատէր, եւ իսկոյն այդ ընտանիքէն բռնագրբաւուած հող մը, կալուած մը, ինչք մը կը վերագրուէր՝ **ձեռոց** պատկառազու ժողովին հրամանաւ իր սեփականատիրոջ:

Թէ հին, եւ թէ նոր Ուխտի պատմագրութեան մէջ, ճիւղահամարը, մասնաւոր ուշադրութեամբ պահուած է, քան ո՛րեւէ մի ուրիշ ազգի պատմութեան էջերուն մէջ: Մարտաւորութիւնէ կոչուած՝ Առաքեալ, եւ Աւետարանիչ Մատթէոս, Ս. Գիրքէն առնելով է որ՝ Աքրահամու որդւոյն Դաւիթի, եւ Դաւիթի որդւոյն Յիսուսի Բրիստոսի ծննդեան ճիւղահամարը կուտայ մեզ մանրամասնօրէն: Թէ ո՛չ, պիտի բաւականանալ գրելով որ՝ Յիսուս ծնած է Աքրահամի

սերունդէն, շատ շատ Յեսսէի որդի՝ Աստուածահայր Դաւիթէն:

Աւերելոյթս՝ դիւրին՝ այլ իսկականին մէջ շատ դժուարին եղող միւղազրութեան այս արուեստի մշակումը, մեր օրերու մէջ աւագ կարելորութիւն ստացած է:

Մովսէս հայր պատմագիրներու, օրէնդիրներու, ստեղծագործութենէն սկսեալ՝ գաղափարաց կարգին հետ, կը պահէ ղէպերուն մանրամասն, մանրակրկիտ արձանագրութիւնները: Անոր դիտող աչքէն չվրիպիր իսկ **ճականախեց** մը: Մովսէսէն վերջ, միւս մատենագիր դատաւորներ, մարգարէներ, Աւարեալներ հետեւած են նոյն ուղղութեան:

**Եօրը քիւից խորհրդաւորութիւնը.** — Ս. Գիրքին, մէկ ծայրէն միւսը՝ եօթը թիւին վերագրուած է **խորհրդաւոր** նշանակութիւն մը: Եւ այդ ծագում կ'առնէ ստեղծագործութեան, այդ հրաշագործ մեծ յեղաշրջումի **եօրը** օրուան կամ ժամանակամիջոցի մէջ զլուխ հանուելէն:

Արարիչը՝ վեց կանոնաւոր շրջանի մէջ ստեղծագործութիւնը լրացնելով, եօթներորդ օրը՝ **սուրբ օր, հանգիստի օր** կը հուշակէ, «**զի օր Տեառն է:**» Սինայի բարձունքէն, երբ տասնաբանեան կ'ուտայ, Չորրորդով կը հրամայէ, «Եւ պահեսցես զօր շաբաթուն»:

Մարդն ալ ուրեմն, Արարչին օրինակին հե-

տեւելով, վեց օր պիտի գործէ, եւ եօթներորդ օրը՝ **սուրբ** պիտի պահէ. «**զի օր Տեառն է:**»

Եւ ահա՛ հոս ինքնին կը ծնի «Նուիրական Շաբաթին գաղափարը, «սուրբ եւ օրհնեալ ի տեառնէ»:

Տէրը՝ հանգիստի եօթներորդ սուրբ օրուան պէս, հանգիստի եօթներորդ տարի մը եւս կը հրամայէ՝ Մովսէսի բերնով:

Երկրին եօթը տարին անգամ մը հանգիստի պէտք ունենալը Տէրն է որ կը պատգամէ. — Եթէ այդ անհրաժեշտ հանգիստը զլանաս անօր, եւ կամ գիտական մեթոտիկ միջոցներով չզօրացնես, այն կը դադրի այլեւս արդիւնաւորելէ, եւ կը յաջորդէ անխուսափելի սովը, **յե եօրն ամաց.**

Պաղեստինի, եւ Եգիպտոսի պտղաբեր հողերն իսկ ենթակայ են այս անխուսափելի, անհրաժեշտ հանգիստին: Յովսէփ՝ Իսրայէլեան խոհուն միտք: զիտէր արդէն այդ կէտը, եւ հեշտիւ կրցաւ մեկնել Փարաւոնի խորհրդաւոր **եօրը գէր, եւ եօրը ցիհար կավերուն, եւ հասկերուն երազիանելու**ը:

Տէրը դարձեալ, Տասնաբանեան տալու առիթով՝ Մովսէսի ըսած էր. — «Եթէ եբրայեցի ծառայ մը, ծախու առնելու ըլլաս, անկիւ վեց տարի պիտի ծառայէ Տիրոջը, եւ եօթներորդ տարին, ձրի, ազատ պիտի արձակուի»:

Տաճարի պաշտօնեան, Ղեւտացի, (ինչպէս

մեր Քահանայից Ս. Պատարագի կարգը) շարսթ օրը կ'սկսէր իր եօթնօրեայ ծառայութեան կարգին, եւ կարգը աւարտեւէն վերջ, եօթներորդ օրը դուրս կ'ելլէր Տաճարէն:

Այսպէս, Քրիստոնէական՝ սուրբ Երրորդութիւնը, եւ Հնդկական (Trimourti)(\*) Երրորդութիւնը մարմնաւորող խորհրդաւոր եւ սրբազան երեք թիւին քովիկը, եօթը թիւը, իր բազմապատկիկներովը նուիրագործուած կը տեսնենք, հին եւ թէ նոր ուխտի պատմութեանց մէջ, հիմ ունենալով, ինչպէս վերեւ յիշատակեցինք, «եւ Աստուած օրհնեց եօթներորդ օրը, եւ սրբեց զանիկա, եւ հանգիստի օր սահմանեց»:

Աւելորդ չըլլար հոս, մի քանի քաղուած ընել Ս. Գիրքէն: «Կայէնը սպաննողին՝ **ԽՈՐՈՒՄԱՅԻԿ**, իսկ կայէնապանը (Ղամբը) սպաննողին՝ **ԽՈՐԱՆԱՍՈՒՆ** եւ **ԽՈՐՈՒՄԱՅԻԿ** պատիժ կը սահմանուի:» «Նոյ՝ մարտը կենդանիներէն **ԽՈՐՈՒՄԱՅԻԿ** գոյգ կ'առնէ»:

Եօթներորդ օրէն հար ջրհեղեղը կ'սկսի: **ՅՈՐՈՒՄԱՅԻԿ** ամսոյն, տասնեւեօթներորդ օրը, Տապանը Արարատ լեռան կատարը կը հանգչի:

(\*) Հնդկական երեւոյթութիւնը. — Պրահմա՝ սեղծող, **Վիշնու**՝ պաշտպան, եւ **Սիվա**՝ աւերող եւ բնութեան եւեմ գորուար ուժերու ներկայացուցիչ (արգասաւորող):

Նոյ Աղանին կ'արծակէ, եւ երբ կը տեսնէ թէ՛ դեռ ջուրերը չեն քաշուած, **ԽՈՐՈՒՄԱՅԻԿ** օր եւս կ'ըստպատէ, եւ նորէն կ'արծակէ, ուր ծիթենիի տերեւով մը կը վերադառնայ, **ԽՈՐՈՒՄԱՅԻԿ** օր ալ կ'սպատէ, եւ դարձեալ կ'արծակէ:

Արրահմա՝ Արիմէլէրի **ԽՈՐՈՒՄԱՅԻԿ** էգ ոչխարներ զատեց, որպէսզի վկայութիւն համարուի. որ այն հորը, Բէրաարէն ինք փորած էր:

Յակոբ՝ Լաբանի քով **ԽՈՐՈՒՄԱՅԻԿ** տարի կը ծառայէ Լիան եւ Ռաբէլը ստանալու համար: Փարաւնի **ԽՈՐՈՒՄԱՅԻԿ** գէր եւ նիհար կովերն ու հասկերը, եւ այլն:

Աստուածաշնչեան այս յորդաբուղիս, եօթնաբուղիս գետէն, Վարագղատեան ստումով մը, զանք մեղմիւ Յովհաննէսի Աստուածայայտնութեան դուռը բաղիւնք:

**ՅՈՐՈՒՄԱՅԻԿ** եկեղեցիները, **ԽՈՐՈՒՄԱՅԻԿ** խորհրդանշող գեղեցիկ քացատրութիւններ կը գործածէ: **ԽՈՐՈՒՄԱՅԻԿ** սասղերը՝ **ԽՈՐՈՒՄԱՅԻԿ** աւսանակները: Աստուծոյ **ԽՈՐՈՒՄԱՅԻԿ** հոգիները, **ԽՈՐՈՒՄԱՅԻԿ** բորբոսած կրակի դամբարանները, **ԽՈՐՈՒՄԱՅԻԿ** կնիքով կնքուած գիրքը, եօթը եղջիւր եւ եօթը աչք ունեցող գառնուկը:

Աւետարանի մէջ ալ պակաս չեն. «Եթէ քու եղբայրդ քեզի դէմ, ոչ թէ եօթն անգամ, այլ եւ եօթանասուն եւ եօթն անգամ մեղանչէ, դարձեալ պիտի ներես անոր» կ'ըսէ ներողութեան մեծ Վարդապետը:

Մեր, Առաքելական Ս. եկեղեցւոյ **Խօրը Ս.** Խորհուրդները, մեծ պահոց, եւ յետ **Չատիկի՝ Պէնտէկոստէի Խօթը** շարաթիւները:

Աշխարհի Խօթը հրաշալիքներուն քով, իմ զբուարթատոհ նախահայրերուս **ոխսը** բախին, որ կը ճնկէին՝ **ոխսը** պորտի կենաց օրհնութիւններ հիւսելով: Ստեփանոսեան Խօթը սարկաւագները, Խօթնագիսակը (Սամիտոն), Խօթնզլխեայ վիշապը, Խօթնալոյս կամ Խօթնարիփեան շնորհը, Դանիէլի Խօթնասուն Խօթներորդները (490 տարի. Դանիէլէն մինչեւ Քրիստոս), եւ վերջապէս Խօթներեակ օրէնքը (Տասնարանեայն)՝ Տասնարանեայն(7+3) եւ վերջապէս՝ Յորէլեանի Յիսնամեակը (7×7=49+1=50) Խօթը անգամ Խօթը տարիներով բացատրելու Մովսէսի Խօթը թիւին հանդէպ ունեցած պատկառանքը եւ յարգանքը ցոյց կուտար: եւ դառնալով դարձեալ մեր նիւթին՝ Յորէլեանը, ուրեմն, Խօթը անգամ Խօթը երկար տարիներ՝ զբարտառած, անարգուած, իրաւագուրկ, պատուազուրկ, ընչազուրկ՝ կոխտուածը, բռնաւորին բռունցքովն ու արացիի հարուածով՝ զլորուած ինկածը, փիւնիկի նորափետուր թեւերով հրաշօրէն պիտի յառնէր երգելով **Iobelի** ծայնով իրաւունքի յազմանակի քայերգը հնչել:

Իսրայելացիք, առաւել իրաւամբ, ունէին Յօթեխանի այդ առաջին առաւօտը երգող հագնեբզուններու երգերը հրաշագան. Արդեօք որպիսի՜ յուզիչ տպաւորիչ բացագանչութիւններով նկարագրուած

են անոնք, այն առաջին քաղցրահնչիւն աւետիսը «**Iobel**»ին, պարման ու պարմանուհիներու ուրախութեան կայթն ու պարը, երգն ու ցնծութիւնները: Նոյնպէս կատարուած խաղերն ու մարզանքները, ուր պիտի տեւէին ամբողջ այդ ազատագրութեան—Յորեկինական տարւոյն շրջանին: Ես հոս, մեր Գողթան երգիչին, արեւոտ հակիրճ մի քանի տաղերը հնչեցնելով պիտի բաւականանամ:

— «Ո՛ տայր ինձ զժուխ ծխանի, եւ զառաւօտն Նուասարդի, զվազելն եղանց, եւ զվագելն եղջերուաց, մե՛ք փաղ **հարուա՛ք**, եւ **քմբկի հարկանէա՛ք**»:

Յորեկինական ընդունելի տարին, Ազատագրութեան, եւ միանգամայն հանգիստի տարին էր: **Հանգիստի օր, հանգիստի ցարար, եւ հանգիստի արիւ Տօն՝** օր ուրախութեան եւ հանգիստի:

Ամբողջ ժողովուրդը աշխատանքէ դադարձ՝ կը հանգչէին: Ու հանգչող մարդուն հետ, կը հանգչէր հողն ալ, զբատն ալ, եւ բոլոր շնչող ու շարժող արարած:

Ղեւ. ԻԵՆ 10—11 «Եւ յիսներորդ տարին պիտի սրբէք, եւ երկրի վրայ անսր բոլոր բնակիչներուն համար ազատութեան քարոզ կարդալ տար: Ասիկա **Չեզի Յորեկեան** տարի ըլլայ եւ **Չեզմէ** ամէն մէկը իր ստացուածքին պիտի դառնայ, եւ ձեզմէ ամէն մէկը իր ազատոհմին դառնայ: Այս յիսներորդ տարւոյն մէջ՝ ո՛չ պիտի ցանէք, ո՛չ ա

ինքնիրմէ բուսածը պիտի հնձէք, եւ Ձեր յօտած այգիէն պիտի չժողվէք:»

Ղեւ. ԻԵ., 20—22 «Եւ եթէ ըսէք թէ՛ եօթներորդ տարին ի՛նչ պիտի ուսննք: Վեցերորդ տարին Ձեր վրայ պիտի ղրկեմ իմ օրհնութիւնս, եւ երեք տարուան արդիւնք պիտի տայ: Եւ ութերորդ տարին պիտի ցանէք, ու հին արդիւնքէն պիտի ուտէք: մինչեւ իններորդ տարին:»



Մեկոն Ա.ՍՍ.ՏՈՒՐ

պատղ, նուազեցուցած, կարճեցուցած են անոր պարմանաժամին թիւը, եւ զայն վերածած ուրիշ խրախճանութեանց, սկսած են՝ նոյն իսկ ընտանեկան շրջանակի մէջ, տօնել երկու ամուլներու խաղաղիկ կենցաղին եւ կենակցութեան Քսանեւհինգ ամեակը երջանիկ: Նոյնպէս կր տօնախմբեն գիտունի

Իօսելի հնչումը՝ երկինքէն օրհնութիւն եւ բարիք պիտի տեղացնէ, Ազգերը պիտի եղբայրացընէ, խլելով անիրաւութեան որոմները, եւ երկիրը վերածելով զրախտի:

Յորելեանը՝ այսբան փնտռուած, սիրուած, այնպէս որ մարդիկ կարօտակէզ անոր գալուստին յաճախ անհամբերօրէն ըս-

Գիտունի մը, զրագէտի մը, աշխատաւոր ուսուցչի մը, փրկարար զօրապետի մը, օգտակար եւ արդիւնաւոր հաստատութեան մը քսանեւհինգամեակը, կարծես անհամբեր սպասելու յիսնամեակին:


Յաճախ՝ մեր մէջ Յորելեանները, իրենց բուն նպատակէն շեղելով աղաւաղուած են եւ ընտրուած են իբրեւ միջոց ինքնագովութեան, նիսթական վարձատրութեան, ինչ որ երբեք ներքի չէ պղծել այլ սրբութիւնը, ինչ որ ալ ըլլան արգարացումի պատճառները:

Ձերմագին կը մաղթեմ որ իցի՛ւ արժանիքը պարծի, իրաւունքը՝ Աստուածանայ, Արդարութիւնը՝ յուերժանայ, ճշմարտութիւնը՝ անմահանայ, եւ երազուած Յորելեանական փողի հնչեբգութիւնով՝ ազգեր եւ ազիւնք իրենց հանգիստի պահուն՝ անբոյթ, եւ անխուով պանծացնեն **Եղբայրութեան, Խամբութեան Եւ Խաղաղութեան** սրբազան Տօնը տիեզերական:

ՄԵՂԳՈՆ Ա.ՍՍ.ՏՈՒՐ



## ԸՆՏԻՐ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ



— Խեղացի մարդը՝ չնայիր օրոցքին վրայ՝ ուսուցից ընծայուեր է, հասպա դէպի դերեզման՝ որ ինքն իր արդեամբ պիտի պատրաստէ:

— Թ՛մբուկը անդադար զարնելը զմարդ կը յոգնեցընէ, մօտէն զարնելը՝ կը խլացընէ, իսկ գլխուն զարնելը՝ կը ճաթեցընէ:

— Ուր որ յուսոյ տեղ կայ, հոն ամէն բան կը գտնուի:

— Հայրենեաց քարերը աւելի տաք են քան Բաբելոնի փռերը:

— Եգիպտոսի մէջ՝ կը զարմանամ թէ մէկ խօսուն արձան մը կայ եղբր, Մեմֆոնինը. իմ աշխարհիս ամէն քարերն ալ կը խօսին իմ սրտիս:

— Ի՛նչ երջանիկ հող է այն հողը՝ որ իմ կերած հացիս ցորենը բուսուցիր է, անոր ալ սերմը նոյն հողէն բուսեր է, այսպէս ալ զիս եւ իմ նախնիքս միշտ իրմէ բուսուցիր եւ իր մէջ պիտի ծածկէ:

— Անոնց տուածը շատ հեղ բազմաջուր գետի մը կը նմանի, որ արտիգ քովէն կ'անցնի կ'երթայ, իսկ հասարակաց տուածը՝ ճղճղած առ-

ուսուցներու՝ որոնք աւելի օգտակար են արտիգ, վասն զի մէջէն կ'անցնին:

— Յամաուութեան եւ ամբարտաւանութեան մէջ բաժնելու ճեղք չեմ գտած:

— Նման այն թագաւորին, որ անիրաւութեամբ առած թագէն հրատարիլ չուզելուն՝ պալատին աշտարակէն վար ձգուեցաւ եւ իյնալու ատենն ալ կ'ուրախանար որ թագը գլուխը վար կ'իյնար, թէպէտ եւ դիտէր որ այն թագն էր իր իյնալուն պատճառն ալ:

— Վիճաբանողին մեծ վնասն այս է, որ շատ կը խօսի, քիչ կը լսէ, շատ կը զրուցէ, քիչ կը քննէ, մասնաւանդ թէ չի քններ:

— Երկայն լեզու, կարճ ուղեղ:

— Թէ որ հասակը չափել կ'ուզես, կանգունը վրագ դիր, քովինիդ վրայ մի՛ դներ. իսկ թէ որ երկուքնուդ հասակն ալ կ'ուզես չափել՝ երկուքին ալ մէկ կանգուն բանեցուր:

— Խեղացի եւ գիտուն մարդ՝ կը դատէ իր սղգն՝ բայց չդատապարտեր, անոր վէրքերը կը տեսնէ գոցելու համար՝ չէ թէ արեւուն ցուցընելու համար:

— Առանց աս տատիճանը ընելու՝ մէկալին անցնիլ ուզելը՝ անանկ դետի մը վրայէ ցատքել ուզել է, որուն կամ աս ափունքին վրայ կամ ան ափունքին վրայ՝ ցատքողին մարմինը կը մնայ:

— Ոչ ճամբան գիտնալն կարաւանը իր իջե-

ւանին կը հասցընէ, ոչ նաւահանդիսաբ ճանչնալն  
զնաւը կը մօտեցընէ:

— Թէ որ կրակը մօտինները չտաքցընիր, հե-  
ռուինները ի՞նչպէս կը տաքցընէ:

— Աշտարակին ամէնէն աղուոր քարը ամէնէն  
բարձրը չէ, հապա այն՝ որ իր տեղը լաւ յարմար  
կեցեր է:

— Մարած ճրագը, կէս օրն ալ կէս գիշերն  
ալ սեւերես է:

Հայրն ալ տղեկն ալ տուին, կշռեցի, եր-  
կուքն ալ հաւասար եկաւ. թէպէտ տղուն թաթիկը  
պզտիկ էր, մէջը քիչ կ'առնուր, բայց ինքն ալ իր  
լեցուն ձեռքովը տուած էր:

— Հաց ուտելով ո՞րչափ պիտի սպրիս, շատ  
շատ ութսուն տարի, իսկ հացի տեղ իմաստութիւն  
շահելով՝ յաւիտենականութիւն մը կ'ապրիս:

— Գլխիդ թագը՝ խելք չէ, ձեռքիդ դաւա-  
զանը միշտ շիտակ ճամբու առաջնորդ չէ:

— Առանց սրտոտութեան լաւ բան մը չըլար,  
վասնզի Արիւթիւնն է առաջին առաքինութիւն  
մարդկային բնութեան:

ԽԻԿԱՐ ԻՄԱՍՏԱՆ



Ա. ԳՕՄԻՍ ՄԷՋԷՆ

Կ Ա Մ Ս Ա Ր

Յոտակ, մէկին ու հակիրճ պէտք է գրել ա-  
նոր վրայ, յոտակ՝ ինչպէս եղան իր կեանքն ու  
ոճը բնաշխարհի առուակներուն նման վճիտ ու հան-  
գարտիկ, մէկին՝ ինչպէս եղաւ իր հոգին համեստ  
ու հեղատամբայ՝ եւ որ երբեք չգիտցաւ կեղծել  
հայրենի ծաղիկներուն նման անսեթեւեթ ու կեն-  
սունակ, ու հակիրճ՝ ինչպէս իր գրիչն ու արտա-  
յայտութիւնը այնքան բերուին ու ուժգին:

Աչքիս դիմացն ունիմ գուրգուրոտ ձեռքերու  
կողմէ հրատարակուած անոր Յոյզեր ու Խոյզեր»ը:  
ժընէվի մէջ հատակոտոր հաւաքուած ձեռագրե-  
րու մէկ փոքր մասը որ հաղիւ կրցեր են պահել  
խանդակաթ ձեռքեր ու փոխադրել մինչեւ ապա-  
հով հանգրուաններ:

Սրտի կծկումով ու տեսակ մը երկիւղածու-  
թեամբ կը բանամ անոր էջերը: Հոն է ան՝ մեր  
համեստ հսկան, որ կրցաւ դաւառի հեռաւոր մէկ  
անկիւնին մէջ մթերե՛լ, մթերել ու ինքնօգնու-  
թեան հրաշալի տիպարը ըլլալ: Ամէն մէկ տողը  
այնչափ մճիտ ու սահուն որ կարծես ինքն է որ  
կը վերակենդանանայ, կ'ապրի, կը խօսի քեզի:



Պէտք չէ փնտռել անոր մէջ մեծ փոթորկումներ, աղմկարար սրտներ եւ կամ դարձգարձիկ ու սեթեւեթ տողեր: Զուսպ ու քնքուշ, սահուն ու մըտերմիկ են անոնք՝ գաւառի զուլալ ջրերուն պէս կենսամորոգ՝ որ կ'անցնին հեզիկ մարգերուն մէջէն իրենց անփառունակ երգը կարկաջելով:

Եթէ Հայ գրական պատմութեան մէջ համեստ բանաստեղծներու անկիւն մը յատկացուէր, անոր առաջին տեղը հարկ պիտի ըլլար տալ կամ սարին՝ Բրօֆ. կարապետ Սողիկեանին որ ինչպէս իր կենդանութեան, նոյնպէս մահուընէն վերջ ալ կարծես չուզեց որ իրեններէն զատ ուրիշներ ձանչնան զինքը:

«Առուակի պէս անդադար,  
 կ'երթայ հոգիս դէպի ծով.  
 կը զգամ հոսիչն ես անոր,  
 կը նշմարեմ թէ ի'նչպէս  
 իր եղերքը քերելով,  
 Հետը առած կը տանի՝  
 Անոր փշրած բեկորներն»

Անոր հոգին այո՛, ինչպէս ինք կ'երգէ իր «Նոր տարի» քերթուածին մէջ հեզակարկաջ առուակ մը եղաւ որ անդադար հոսեցաւ իր կենսարար զովութիւնը պարգեւելով Եփրատի հրատոչոր ու լուսաբաղձ սաներուն Հոսեցաւ ան անոնց սրտերուն մէջէն զսան եւ հինգ տարիներ անձայն ու անշշուկ....

Ու, այսօր երբ ո՛չ թէ բեկորները միայն փշրած այլ իր կեանքը խորտակուած է ու տարած դէպի մեծ, անհուն, անպարզիծ ծովը, ես կը զգամ թէ կը հոսի դեռ իմ սրտէս այդ վճիտ ու բարերար առուակը ու իր հետը կը տանի իմ հին սէրերէս ու յոյսերէս շատ բաներ, անդամ մըն ալ վերապրեցնելով զիս անցիալիս մէջ ու իր մտերմութեան:

Բայց, ըսի թէ հարկ է կարճ գրել «կամսար» լին վրայ: Ու սրճա՛ն իրաւունքով երէց եղբայրս՝ Ռուբէն Որբերեան փափաքած էր որ «Մանիշակ» անուանուի իր հաւաքածոն: Հակառակ «Յայդեր ու խոյզեր»ուն՝ ես մանիշակ յորջորջած եմ արդէն ու բոլոր զինքը ձանչցողներ այնպէս պիտի ընեն, մինչեւ որ օր մը մեր սիրական «կամսար»ն արժանավայել յարգանքի եւ յաւերժացումի Յուշարձանը կանգնենք մեր միւս անմահներուն կողքին:

**ՍՍ. ԱՍ. Կ ՄԵՍԻՐՈՊ**

ԾԱՆՕԹ. — Յարգելի բրօֆեսէօրին յիշատակը ոչ միայն զուրգուրանքով պիտի պահեն Եփրատ Գոլէճեաններ, այլ բազմաթիւ համակիրներ. յոյժ գնահատելով անոր մտաւորական քանքարին հետ անոր հոգիին բարձրութիւնը:

Ս. Գ.

Համեայ ինքնակենսագրութիւն Բրոճ Կ. Սողկիանի շնորհաբան 1869: Մանկութեանս 4—5 տարիներէն դատ կեանքիս մնացեալ մասը դպրոցի մէջ անցուցած եմ, երբեմն աշակերտ յետոյ ուսուցիչ, բայց մինչեւ հիմա ալ ուսանող:



ԲՐՈՅ. ԿԱՐԱՊԵՏ  
ՍՈՂԿԵԱՆ

«1890ին Եփրատ Գոլէճէն ընթացաւարտ: 3½ տարի խարբերդի Ս. Յակոբ Թաղի կերպրդպրոցը դասախօսած եմ ու անկէ վերջ Եփրատ Գոլէճի մէջ:

«Ատեն մը դրական հակամտեր ունէի, բայց ետքը բընական դիտութիւններու առիթն ինքզինքս. երկու ճիւղերն ալ կը սիրեմ եւ կը դասախօսեմ դեռ:

«1909ի վերջերը Եփրատ անուն կիտանսեայ հանդէսի մը

խմբագրութիւնն ալ աւելցաւ դորձիս վրայ:

«Այսպէս կը շարունակեմ:

Մեռաւ 1916 Յունվար 26ին,




ՀԻՆ ՅԵՇՍԱՆՆԵՐ

ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԽԱՆ ԹԻՐԵԱՔԵԱՆ

Ե Ի

ԽԱԶԻԿ ՈՒՂՈՒԹԻԿԵԱՆ



Ողջո՛յն ձեզ, հին բարի օրեր, բոյրեով եւ շողեով լեցուն, ո՛ր Բաղը ժամանակ, երբ



մարդկային ազգը իր նմաններուն ի սես ամեկուրքեան բոցեով չէր փայլաաակեր. երբ օրուան հոգը չէր խարսցեր մեր սակաւօրեայ կեանքը, այլ ուրախութիւնը ծաղկէ ծաղկի բոցսոյ բիթեանիկ կը պանար ամէն տուն եւ երդիք եւ արժանըկարի մը պէս հանոյական հաւոյքներ կը պարզուէին աւխարհի բեմին վրայ: Ա՛հ, պահ մը Ե՛տ, Ե՛տ դարձէք, ո՛վ անմտաց անցեալի բերկուրքիւններ եւ չդարձեալ պարզեցէ՛ք մեզի վայելքը երջանկութեան:

Բայց մենք անգոր այն ասին ըմբռնեցինք լաւագոնին հաւակը, կը կարծէինք թէ կեանքի զարուր անուց է, երջանկութիւնը՝ անսպառ, բարիքները, մշտնաւ մինչեւ որ պայքեցաւ աշխարհաստան փոքրիկը եւ վերիվայր յեղաւորեց խաղաղիկ աշխարհը:

Օ՛հ, սակայն դարձրենք մեր աչքերը մէկի ղեպքերու սեւ վարագոյրէն ու մտնենք հրնուանկներու անցեալը ու կորոսագին դիտենք հմայիչ պատկերը հովիւ երիտասարդութեան:

Այն հեռաւոր տարիներուն՝ Պալապ հայրսրսը իր մէջ կը կամրէր չկնաղ ձիւրքերով շատ աւելի սիրելի ղեմքեր, պարծանք մեր ազգին: Անոնցմէ մին էր Տօժր. Յարութիւն կամ Թիրեախան, որ իւրացուցած բարձր գիտութիւններով, արեւելեան լեզուներու խորին հմտութեամբ եզակիան դիրք մը կը գրաւէր մեր համայնքին մէջ: Յարգելի բժիշկը ոչ միայն հարստ աւակներուն էր Հիփոկրատի, ջերմնաւանդ Բուրմ բժշկութեան աստուծոյն, այլ բազմախրական աշխարհի մէջ ալ հզօր անհասականութիւն. անոր հմտութեանց արդար ծառանգորդ կը կանդիսանայ իր սիրասուն որդին Տիր Միւրդան: Տօժր. Թիրեախան իր շահած մեծ անունով մեր համրային կեանքին մէջ մտած էր իր ժողովական, բանիցս ասեմա-

պիս եղած Ազգ. Ժողովին, որու ընթացքին ունեցած վիճաբանութիւնը Նար պէյ Ս.ի հետ սրբօրհի՛ր թէ բարօրի արտասանութեան մասին լաւ կը յիշեմ. ինք եղած է նոյնպէս Աւսումն. ետեւորոյ Ասեմապիս եւ այս պատշոնին բերմամբ պարտականութիւն ստանձնած է առանց վկայականի ուսուցիչները բնութեան անցընել: Այսպէս իր Կէտիկ Փառայի բնակարանին մէջ ոչ միայն հիւանդներ կ'ընդունի, այլ



ԽԱԶԻԿ ՈՒՂՈՒՐԻԿԵԱՆ

եւ կրթական պատշոնեաներ, որովհետեւ այդ օրերուն Ազգ. Պատրիարքարանը կը պարտադրէր ամէն ուսուցչի վկայական ունենալ: Այս նպատակաւ հոն կը դիմէ Եւսկիւսարէն ուսուցիչ մը: Մինչ յարգելի բժիշկը իր անանձնատենեակին մէջ կը պարապէր ուսուցչի մը բնութեամբ, յանկարծ սենեակին դրան քերուակի կը գտնուի ու երբ կը բացուի, նոյն ուսուցիչը վեհերուս կերպարանով ներս կը մտնէ ու կը խնդրէ որ ինքն ալ բնութի ճրանգներէն ճիւղին մէջ, յայտնելով միեւնոյն ասեմ թէ պատրիարքն ալ գիտէ: Աւսուցիչը իր այս խրնդրանքին մէջ այն տպաւորութիւնը կ'ազդէր

Մտե՛նապետին վրայ քէ շնորհ խնդրողի երեւոյքն ունէր, որպէս զի պատժութի մը արժանանայ եւ ամասկան ստանայ Ս.յն ասե՛ն ազնիւ բժիշկը կ'առաջարկէ անոր իբր նիւր՝ Պէրիկլէսի դարբ գրել քիչ մը ընդարձակ, որ պէտքի գաղափար կազմէ անոր ճշմաներէնին եւ պատժութեան մասին: Ս.յս նիւրբ ասլով հանդերձ Տօքթ. Թիրեաբեանն ուսուցչին արկարախօս եւ համեմատ երեւոյքէն զտեսելով անվաստաւորին մը կ'ունենայ անոր մասին կարծելով քէ ի գա'ւր պիտի գրադեցնէ զինքը: Նոյն պահուն յարգելի բժիշկը հիւանդի կը կանչուի ու կը բողո իր բնեկից յանձնարարելով անոր շարունակել իր աշխատութիւնը մինչեւ իր դարձը: Ուսուցիչը կը սկսի գրել իրեն արամայրուած 6—7 բուղբերու վրայ, ու սեւացնելով զանոնք վերստին սրիւ թուղբեր կ'առնու, կը գրէ ու կը գրէ: Պահ մը վերջ կը դառնայ Տօքթ. Թիրեաբեանն ու յայտնի արճնեղութեամբ մը կը տեսնէ որ ուսուցիչը չէ վերջացուցած իր աշխատութիւնը եւ միշտ միեւնոյն անվաստաւորեամբ կ'ըսէ. «Քաւական է, տեսնեմ ի'նչ գրած էն»: Ու կը սկսի կարդալ եւ ո'չ չափ առաջ կը տանի ընթերցումը, մերթ ընդ մերթ հիացումով ակնոցին տակէն կը դիտէ բնութեան ենթակայ ուսուցիչը ու վերջապէս ընթերցումը ընդհատելով կ'ըսէ. «Յղբայր, նե-

րեցիք, շատ սխալ մը գործած ենք ու ձեզ ձանձարոյք պատճառած բնութեան ենթարկելով: Պահ էստե՛ս էսպիսի հմտութեամբ պատժութիւն գրած էք շատ գեղեցիկ ճշմաներէնով մը, գացէ՛ք հանգստացէ՛ք, եւ ձեր վկայականը ձեր ստե՛ր կուգայ, իսկ ձեր այդ գրածները մասնագործանիս մէջ իբր յիշատակալիտի պահեմ»: Ս.յս ուսուցիչն էր Խաչիկ Ուղարիկեան,

այ միայն նոր սերունդին անձանօք դեմք մը, այլ նոյն իսկ իր ժամանակին, որովհետեւ իրական արժանիքները համեմատ կ'ըլլան, պէտք չունին ցուցադրութեան անոց հակասին վրայ բանդակուած չէ իրենց տաղանդին մեծութիւնը: Ուղարիկեանն կենդանի հանրագիտական մըն էր, սրացած աշխարհի ամէն վայելքներ, մտկոյցին յարած էր իր ինքնագարգացման: Զարմանալի չքուի երբ բանք քէ Պէշրէքի երկիւստար ընդարձակ բառարանը գոց գիտէր. իր հմտութեան յայտնի ապացոյց էր ծծմեր բառի վրայ ընդարձակ ուսումնասիրութիւնը: Իր ամբարած գիտութեան զանձերէն օգտուած ենք շատերս ասե՛նին, ինչպէս յայտնի բանաւէր Ռոճ. Կարապետ Բաւախանեան: Տիրան Զրաբեան, Թէոդիկ եւ այս առղերը գրողը: Երախտագիտութեամբ կը յիշեմ քէ բառարանի տալիսութեան օրերուն ինձ հօր նկոյն կ'ըսէր ինք եւ շատ նշողմենով օժտեց զարժու-

Տօքթ. Թիրեաբեան եւ հաչիկ Ռադուրիկեան վազուց հրածարած են այս կեանքէն: Սեպտեմբեր կը հանգչի Նոր Աւետարանի մէկ անկիւնը, իր սիրելիներու գուրգուրած ակնարկից սակ, յաւէս պաշտելի իր փառաւոր անունով, գոր անկարուս կը պահեն իր հմտալից երկասիրութիւնները, ինչպէս Տաղաշափութիւն եւ Հայերէնի գեղծումներ, Պուալոյի բարգմ, որոնց մէջ բարձր ի գլուխ կը պահնայ Ս. Բարսեղի բառարանը: Իսկ միւսը իր ծննդավայրին Եւսկիտարու գերեզմանատան մէջ, որուն վրայ իբր յուս պահակներ կը հսկեն այլ անհոռաց արուարձանից երկիւնքը գեղազարդոյ սատղեր պայծառ: Անոր յզնամ գլուխը իցի՛ւ հանգչէ ոչ քէ հողէ բարձին, այլ գրէի հասորի մը վրայ, որպէս զի խաղաղ վայելէր իր բունը յախտնական:

Իցի՛ւ հայրեան դարաւոր արմատից վրայ վերջնաւորին այսպիսի գեղեցկուղէ բարունակներ պտուղներով ակաղձուն: Այս իսկ է ընդհանուր քաղցրագոյն բաղձանք:

Ս. Գ.



ՀԻՆ ԷՋԵՐ

### Յ Ո Լ Ք Ե Ր

Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆՆԻ ՄՏԱՄՈՒՄՆԵՐԷՆ

ՁԳԵՄՏ.— «Ձուխային կամ կտաւին գիւտն», կը գրէ էօծէն Բէլլոան զգացմանց ամբողջ աշխարհ մը երևան հանեց, կինն իր շրջագգեստին հետ ծնաւ. յառաջագոյն անասուն մըն էր նա միայն»:



ԹՇՈՒՍՈՒՈՒԹԻԻՆ.— Տգիտութեան ու անձնասիրութեան արդիւնք, որ գիտութեամբ ու ընկերայնութեամբ պիտի շնչուի աշխարհէս:

ԺՈՒԺՎԱԼՈՒԹԻԻՆ.— Եթէ մարդիկ աւելի ժուժկալութիւն ունենային, բժշկութիւնն ամէնէն շահաւոր արուեստներէն մին չպիտի ըլլար այսօր:

ԻՄԱՍՏՈՒԹԻԻՆ.— «Իմաստութեան սկիզբն Աստուծոյ Էրկիւղն է», կ'ըսէր նախնի իմաստունն, «Իմաստասիրութեան սկիզբն մարդկութեան սէրն է», կ'ըսեն մեր դարուն իմաստուններն:

ՇՈՒԲԷՆՀԱՌԻԷՐ.— Արտաբոյ կարգի և տարօրինակ մարդ մը, որ յատուկ տեղ մը, յատուկ զահ մը գրաւեց Գերմանիոյ փիլիսոփայութեան պատմութեան մէջ: Թիւր և ճշմարիտ գաղափարներ խառն կը պարունակեն իր բազմաթիւ գործերն, որոնց մէջ ամէն առթիւ չը թերանար կատարի յարձակումներ ուղղել աստուածաբանական մտորութեանց դէմ: «Եթէ այդ վարպետներն» կը գրէ հեղինակն, «անպատճառ բացարձակ մը (Աստուած) կ'ուզեն, ես իրենց ափին մէջ հատ մը դնեմ, որ այդպիսի գաղափարի մը ամէն պահանջմանց աւելի համապատասխանէ քան իրենց ամպամած այլանդակ ձեւարանութիւններն, և այդ բացարձակն է ճիւղն»: Ուրիշ տեղ մըն ալ կ'ըսէ. «Եթէ կրնայ զետիւն իյնալ նիւթն, ապա և կրնայ խորհիլ»: Կենաց և աշխարհի վրայ ամենատխուր և յուսահատական տեսութիւններ կը յայտնէ Արթուր Շօրէնշաուէր:

Ըստ իւր կարծեաց, կեանքն ալ ամէն երեւոյթի նման, զգուելի և աննպատակ, և անվստահ է: Երանութիւն անհնար է որ ըլլայ այս աշխարհիս մէջ, ուր զիպուածն և մոլորութիւնները կը տիրեն, ուր աղէտք և թշուառութիւնք առհասարակ մարդկան բաժինն են, եւն:

Էտկառ Գիինէ, Գաղղիոյ աննման մատենագիրն մահուանէն առաջ գրուած և հրատարակուած սքանչելի գրքոյի մը մէջ խտիւր կը դատապարտէ, և նոր սերունդներն կը զգուշացնէ Գերմանացի փիլիսոփային

վերջին տեսութեանց դէմ, զորս **Յուսահատութեան փիլիսոփայութիւն** կ'անուանէ իլաւար: Իբր անսպառ աղբիւր կենաց և երանութեան՝ զաղղիացի փիլիսոփան արարչութիւնն աչքերնոս առջիւ կը պարզէ, և իր անձն օրինակ բերելով կ'ըսէ. «Քանի կը յանազդիմեմ բնական գիտութեանց ուսման մէջ, քանի վերանստու կ'ըլլամ արարչութեան գաղտնիքներուն, այնքան կը սիրեմ կեանքն, և կը յարիմ աշխարհիս»:

ԱԼՏՕ ԼԸ ՌԻՄԷՍԻՆ ալ (Երկ ժորժ Սան անմահ վիպասանուէրոյն) որ յուսահատ բանաստեղծ մըն էր, ճգնաժամու գիշեր մը անդունդի մը եզրին վրայ գիտնոյ մը կը հանդիպի, որ աստղագարդ կամայն իրեն ցոյց կուտայ: Այս գիշերէն յետոյ բանաստեղծն անդադար կ'օրհնէ արարած ու արարչութիւն. որոնց վրան ամպարշտօրէն անէճք կը մաշթթէր երբեմն:

— ՏՍԼՌԻԻՆ. — Ո՛վ աւելի կարեւոր ծառայութիւն մատոյց մարդկային ազգին, Քրիստոս, որ մարդն աստուածութեան բարձրացուց, թէ Տարուին որ անաւնոց կարգն իջեցուց Բանգալ մեծ փիլիսոփան այս հարցման հետագայ կերպով կը պատասխանէ: «Ելլատանգաւոր է ցուցնել մարդուն թէ որքան անասնոց հատասար է առանց անոր իւր մեծութեան վրայ իօսելու: Աւելի վտանգաւոր է ցոյց տալ անոր իր մեծութիւնն, առանց իր նուաստութիւնն յիշեցնելու: Եւ աւելի վտանգաւոր է: Իրկուրն ալ իրմէն ծածկել: Այլ յոյժ օգտակար է մարդուն առջեւ դնել իւր մեծութիւնն և թէ իր նուաստութիւնն»: Բասգալի իօսքին կը կցենք Գլարառէտի կարծիքն ալ թէ. «Լաւագոյն է աշնուացեալ կապիկ մը ըլլալ քան անկեալ Ադամն»:

(Փիլիսոփայական բառարան)


**Սգիս Տէմիրհիպաւեան**՝ անցեալ դարու գրական մեծ զէմքերէն մին եղած է, բեղուն միտք մը՝ որ այնքան հիւթեղ գրութիւններ սփռած է լրագրական էջերում. իր տառապագին կեանքը հարուածուած հիւանդութենէ՝ ուզած է վերջացնել միանգամ Մօտայի առջև ծովասոյգ ըլլալով, իր տկարութիւնը մղած է վերջապէս անձնասպանութեան և Ազգը գրկուած է իր մէկ հանձարեղ զաւակէն: Բացի իր գրական արտակարգ կարողութենէն իմ վրայ տպւորած է խորապէս իր ազնուական նկարագիրը քիչերու յատուկ և իբր այն զնահատած եմ յայտ զանի կանուխէն: **Պրատէր Ասում** (այս է իր ծածկանունն) միշտ զգուշացած է ուրիշները վիրաւորելէ: Իր գրիչը իր ներքին մարդուն հարազատ թարգմանը եղած է:

Այս առթիւ կ'ուզեմ շեշտել այն բարեբար պաշտպանութիւնը զոր ընծայեց իրեն Մատամ Նիսըն օտարուհին, յետ մահու իսկ չմոռնալով զանի, մենէ աւելի զօրգուրալով անոր վրայ, մինչդեռ մեր գրական փառքերէն մին մահուան թմբիրով աչքերը ծանրացած ատեն չունեցաւ վերջին սփոփանք մը իրեններով շքրչապատուած ըլլալու, որովհետեւ կրնն ու զաւակներ զինք լքած ու արտասահման մեկնած էին...

Ս. Գ.



**ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ  
ՎԻՆԵՆԱԿԱՆ ՄԻԹԱՐԵԱՆ  
ՄԻԱՐԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ**



Միւլիթարեան Միաբանութեանց Տիմոգիւրը Միւլիթար Աբբայ հազիւ աչքերը գոցած էր, (27 Ապրիլ 1749) երբ իւր յաջորդին Ստեփանոս Մելգոնեանի օրով Տիմոգիւրին կանոններուն փոփոխութեան չհանդուրժելով մաս մը միաբաններ բաժնուեցան ու ապաւէն գտնելով աւստրիական դրոշին տակ, Թրիետո ժողովուեցան եւ Տիմեցին հոն անկախ միաբանութիւն մը (1773 Մայիս 19) **Միւլիթարեան** անուան ներքեւ (\*): Մարիա Թերեզիա հռչակաւոր կայսրուհին Միաբանութեան տուաւ 53 յօդուածէ բաղկացեալ կանոնադրութիւն մը (1775 Մայիս 30), որով նորահաստատ Միաբանութիւնը կերպապէս ճանչցուեցաւ աւստրիական տէրութիւնէն իբր կրօնաւորական կարգ մը, ընդունելով միանգամայն կալուած մը վրան վանք. եկեղեցի, տղարան եւ գալոց շինելու արտօնութեամբ:

(\*): Վենետիկ մնացողները Անսոնեան կը յորդորչուէին:

Սկսեալ 1773 թուէն երկացողոյնը իբր վանա-  
հայր կը կառավարէր Միաբանութիւնը. բայց  
1803ին ընդհանուր ժողովին մէջ Աստուածատուր  
Բաբելեան (եպիսկոպոս 1800էն ի վեր) իսպահան-  
ցին ընդհանրական Աբբասայր ընտրուեցաւ:

Նորահաստատ Ուխտը առանց նիւթական  
միջոցներու հաստատուած ըլլալով ի սկզբան հն-  
թարկուեցաւ անհնարին դժոճարութեանց եւ նե-  
ղութեանց, սակայն եռանդուն Աբբասօր կորսով  
եւ ուսումնական Միաբաններուն վաստակը կրցան  
բարեւոքել կացութիւնը եւ բարդաւածման շրջանն  
սկսաւ: Դժբախտաբար Նաբոլէսնեան փնթորիկը  
աակն ու վրայ ըրաւ անէն բան 1810ին Միւթար-  
եանք հալածուեցան թրիչստէն եւ իրենց կալուած-  
ները գաղղիական կառավարութեանէն գրաւուեցան:  
Անդամները կամաց կամաց զիրար գտան Աւսարիայ  
Մայրաքաղաքին մէջ: Թէպէտ Վիեննայի մէջ նոր  
Միաբանութիւն հաստատելու բացարձակ արգելք  
կար, բայց Բաբելեանն ուղղակի փրանկիսկոս Ա.  
կայսեր դիմելով, կրցաւ թոյլտուութիւն ընդու-  
նիլ որ փախտական հայ կրօնաւորները վանք մը  
հիմնեն, պայմանաւ որ տէրութեան կամ քաղաքին  
բեռ չըլլան անոնք: Յաջորդ տարւոյ Փետր. 16ին  
Միւթարեանց տրուեցաւ Գափուշիններու վանքը,  
որոնց մատենադարանը գնեց Ազամական անուն  
հարուստ ազգային մը եւ պարգեւեց Միւթար-  
եանց. Վիեննայի բարի ժողովուրդը ի գուժ շար-

ժեցաւ տեսնելով խեղճ օտարականներուն աղքա-  
տութիւնը եւ բարերար ձեռքեր օրական ուտելիքը  
կը մատակարարէին եւ կահ կարասին կը հայթայթ-  
էին:

Միաբանութիւնը այլեւս հսկայաքայլ կը  
յաւաջանար եւ կը ծաղկէր, մանաւանդ երբ Բա-  
բելեանի յաջորդեց Ազարեան Արիստակէս Աբբա-  
սայրը (1826—1855): Վիեննական Միաբանութիւնը  
չէր տնտեսական ու մտաւոր յաւաջոյնութիւնը  
առաւելագէտ Ազարեանի պարտական է: Առաջին  
գործն եղաւ շինել քաղաքին կեդրոնը հսկայ Մայր  
վանքը եւ այս առթիւ հիմնաքարը զետեղող Փրան-  
կիսկոս կայսեր նուիրեց 25 լեզուաւ տպուած «Որ  
օրհնեմ զայնոսիկ» աղօթքը (1838 Հոկտ. 18): Չեռք  
բերաւ կալուածներ եւ հաստատուն եկամուտնե-  
րով Միաբանութիւնը փրկեց տնտեսական տագնա-  
պէւ Զարգացող երիտասարդութեան մէջ ուսման  
օէրն ու գործելու եռանդը, հաստատելով վեց նոր  
վանատուններ: Ինքը հիմնեց Արամեան Ընկերու-  
թիւնը, (\*) հրատարակել տուաւ (1847) Եւրօպա  
լրագիրը: Իր ժամանակ եղաւ Գաթրճեանի, Գարա-  
գաշեանի, Յովնանեանի եւ այլոց մանրակրկիտ ու-  
սումնասիրութեան շնորհիւ դասական հայերէնի  
գիւտը, որ գարագուսի պիտի կազմէ միշտ հայ  
գրականութեան համար ընդհանրապէս եւ հին  
Հայերէնի համար մասնաւորապէս:

(\*) Այս ընկերութեան նպատակն է դրամազուլս  
մը կազմել եւ նոյնին շահովը հրատարակել ընտիր հա-  
տորներ: Բազմաթիւ անդամներ ունի:



Յաջորդը Յակոբոս արքեպիսկոպոս Պողոսեան (1855—1863) աւելի անբարտ եղաւ պարագայից բերմամբ քան ձեռնորէցութեան պահատէն։ Ազարեանի շինութեան վրայ աւելցուց թեւ մը մայր վանքին վրայ ուր կը գտնուի Աբբայարանը մատենադարանը, կեկեղեցին եւն։

Այնուհետեւ եկաւ Այտընեան (1886—1902)։ Նոր դարկ մը տուաւ այս գիտուն եկեղեցականը վանքին նիւթական եւ բարոյական զարգացման տեսակէտով։ Հրատարակել տուաւ Աւստին եւ հայ մտաւարականութեան պատիւ բերող «Հանդէս Ամսօրեայ» թերթը։ Զարգացուց Հայ երաժշտութիւնը, հիմը դրաւ աշխարհաբարի իր «Քննական քերականութեամբ»։ Իր ժամանակը Միսիթարեանց դպրոցները ծաղկեալ վիճակ մը ունէին ամհնուրեք։

Ներկայ Աբբասօր օրով (սկսեալ 1909) վիեննական Միսիթարեանք պարագաներու բերմամբ փակեցին չորս վանատուններ եւ բացին երկու նորեր Յուլիանտան եւ Պուլկարիա, ասկէ զատ առաքելութիւններ ունին զանադան երկիրներ, Գրիգոր Գովրիկեան 90ի մօտ ծերունի մը ըլլալով՝ այժմ Հ. Վարդան Վ. Միւլքիսեղեկեան իբր Աթոռակալ եւ Փոխանորդ կը վարէ Միաբանութիւնը։

Այս առթիւ կ'ուզենք յիշատակել վիեննայի Մայր վանքին տպարանը եւ մատենադարանը։

Տպարանը արդէն 1776ին թրիէտտի մէջ հաստատուած էր եւ բազմաթիւ երկեր իւրյոս ընծայած. վիեննայի մէջ աւելի զարգացաւ տպարանը։ 1838ին 13 երկաթէ եւ 6 փայտէ մամուլ ունէր։

1855ին վիմագրութիւնն ալ կ'աւելնոր տպարանին առաւելութեանց վրայ, 1849ին Հուլիոսարական թղթադրամներ տպուեցան Միսիթարեան տպարանին մէջ։ Հետզհետէ կը ծաղկէր տպարանը եւ շուրջին կը յաջորդէր ելեկտրականութիւնը։ Այսօր տպարանը ունի 15 մեծ մամուլներ, որոնցմէ եօթը արագապիպ։ Վերջերս ձեռք բորաւ նաեւ երկու Linotype մեքենաներ (շարու կը ձուլուղ միանգամայն), որոնցմէ մին կը շարէ նաեւ Հայերէն։ Զարմանալի է որ այսպիսի հսկայ տպարան մը իւրյոս ընծայած ըլլայ հազարաւոր հատորներ, թող լրագիրներն ու պրակները։ Միսիթարեան տպարանը բովանդակ հայ տպարաններու մէջ առաջինը կը հանդիսանայ իր գործունէութեամբը եւ իր գրերու ճաշակաւոր եւ գեղեցիկ պէսպիսութեամբ։

Ամենաճոխ հայ մատենադարան է վիեննականը։ Մեղուաջան աշխատութեամբ հաւաքուած են հոն հայ հրատարակութիւններ։ Անուանի է մտնաւանդ լրագիրներու հաւաքածոն։ Միայն ձեռագիրներու կողմանէ (իրը 1250 կտոր) էջօրածնէն ու վենետիկէն ետ կը մնայ։ Այսօր մատենադարանը ունի իբր 75000 հատոր գիրք, որոնց 13000ը Հայերէն։ Այս առթիւ կը շեշտենք որ բոլոր հայ հրատարակիչներու «նուիրական պարտքն» է մատենադարանը աւելի եւս ճոխացնել նուիրելով իրենց գիրքերէն մէյ մէկ օրինակ։

ԻՐԱԶԵԿ

ԳՈՐԾՆՈՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ  
ԿԵԱՆՔԻ ՄԷՋ ՅԱԶՈՂԵԼՈՒ

Դ Ա Ս Ա.

— Ուրիշներուն իշխելու համար, սովորեցէք նախ դուք ձեզ իշխել, հետապնդեցէք այն բանին՝ որ ձեզի ամենէն անելի դարհուրելի կ'երեւայ. յազ թեցէք վախին, բախտը կը ժպտի յանդուգն եղողներուն:

Դ Ա Ս Բ.

Դուք ձեր անձին տէր եղէք, ինքնապաշտիւնն միայն ուշադրութիւն կը հրաւիրէ եւ հետաքրքրութիւն կ'առթէ, մի՛ ջանաք այլոց նմանելու դարձածեցէք ձեր անձնական յատկութիւնները եւ հրապոյրները, ձեր արժէքը ցուցուցէք:

Դ Ա Ս Գ.

Ազարդելն մի թողուք ձեր ծնողքէն ձեզ ինկած ժառանգութիւնը, հետեւեցէք անոնց օրինակին եթէ պատուաբեր է այն, մի՛ ծախէք ձեր անդրանկութեան իրաւունքը պնակ մը սոսի համար:

Դ Ա Ս Դ. եւ վերջին

Դիւրք մը ձեզի սրբան ալ յուսահատական երեւայ, թող ձեզ չվհատեցնէ. ձեր հակառակորդները իբրեւ խամաճիկ նկատեցէք, խողի նպատակով թուղթերուն ամբողջութիւնը ձեռքը ունենալը չէ խնդիրը, այլ զանոնք ատենին խաղալ:

ՔԻՆԿՍ

ԼԱՒԱԳՈՅՆ ՊՏՈՒՂՆԵՐԸ ԱՐԵՒՈՒՆ ՏԱԿ  
Կ Ը Հ Ա Ս ՈՒՆ Ն Ա Ն

Ամառուան գեղատեսիլ պատկերներու փոքրախապարտ ակամասեա կ'ըլլանք անէն օր յալկալէմ, սակաւարիւնս, սիրաւեսի, արտաւճ մարդկային նորարարաց պատկերներու:

Մանուանց բազմախիտ բազմներու մէջ, աւեան ու ձմեռուան անձրեւաբեր, մառախլազատ երկիմէէն իջած ստոնամանիքէն ու Եանեղալէն ետք, երբ առաջին պանդուխտ ծիծեռնակը նուազելով աւեալը կը բնէ աչքաբեր գարեան, մանուկները՝ երանգիկախ ցաւազար երեսոյր մը ստացած են ընդհանրապէս:

Մերեզակնային հաւազայրներու գրիւմն ու բացակայութիւնն է այս անգամաբեր վիճակին պատասխանատուն:

Բայց պատասխանատուութեան մեծ բաժին մըն այլ կը ծանրանայ ճնողաց ուներուն վրայ, Հայրը՝ իր գրադուքին, մայրը՝ անկան աշխատութեանց մէջ խորատուգում են: Գործուրուտ մայրը՝ արդարադիւրի, նստակեաց կենցաղին, երկարախօս այցելութիւններու եւ

ցրտափախութեան յառկացում պահերէն դուրս, պէտք է արժանայրէ մասնաշատուկ միջոց մը իր գաւկիցն:

Եւ այդ Երջանին պէտք է ցոյց տայ անոր բնութեան պարզեւած մտնոր օտը, յոյսն ու արեւը: Ինչպէս որ ահառուան հայրսեւամ ու երփներանց պտուղները արեւուն յոյսէն ու հաւազայրներէն կ'ստանան իրենց համն ու հոտը, գեղեցիկութիւնն ու հասունութիւնը, նոյնպէս մանուկներն ալ կը գեղեցկականն ու կը գորանն արեգակին յոյսէն ու օտէն:

Հագուեցուցէ՛ք խնձորը, քանձոր, սելսն ու ձմեռուկը. գգեարն ու խաղողը օտերով, չորս պատին մէջ արեւագուրի: պիտի սննեմտ անհամ, ծիւս, անգոյն պտուղներ:

Մարդիկ, մանուաւոր մանկութիւնը, քարձան: տունկեր պտղաբեր, իրենց անմահն ու գարգացման Երջանին, խանձուած կը մնան առանց արիւնքի բարեբար ազդեցութեան:

Ըտապոյն կազմուրիչն ու գորացուցիչ գեղերը թխեցէ՛ք մեղկան բերնէն դէպի վար արկորը, ապարդիւն կերպով:

Մտէն միջոցներէ առաջ չանկացէ՛ք օգտուիլ ամառուան ու ձմեռուան յոյսն ու արեւէն: Մերեկ յոյսներ խաղ մանկան ազնուագոյնն ու ժառու խարազանն է: Խոնու, անարիւ, աղտաւ սննեակներէ դուրս հոնեցէ՛ք մանուկը, երբ ա-

րեւը իր հրաշագործ կանքեղով աշխարհէ կը յուսաւորէ եւ կը օտցնէ: Դիտական տուեակներով առաջնոր դուած բազմախնամ սննդաւորութիւնը անբաւական է մանուկ մը առաջ: ու գորեղ բնականն մեծցնելու: Սնուեալ պիտի են երաններուն մայրախնամ ծծողութիւն, մտնոր եւ անարտ կար, մտնոր քիւնն ու խնամք, ինչպէս նաեւ խաղանցիկ մանուկի արիւնքին համեմատ ու պատշաճ սննդաւորութիւն, մտնոր օտ, յոյս, մարգանք, յոյսն, յոյսն, յոյսն ու կրքութիւն: Մտկայն այս բոլորին հետ եւ վրան արեւին յայնաօտրած համբոյրն ու զգուանքը անհրաժեշտութիւններ են:

Պտղաբեր ծառն ալ պէտք ունի պարարտեղի, աղբ ու ջուրի եւ զանազան մեծազային տարրերու, բոյց արեւը իր գերադաս դիրք միջոց կը պակէ ամէնուն հով:

Մյս հեմարտութիւնը բազմամտօք ըլլալով օտսերուն, ինչո՞ւ դեռ չեն օգտուիլ պէտք եղած չափով եւ շարահետրեամբ:

Երկու արեւկանէն եւ մէկ հանի ամիս ալ առաջ, մանուկներու թեւեւն ու օտնեցները, ծածրակն ու յոյսն զբերին մտները, գիտներն ու օտազայնի արտիւն մտները ցոյցադրեցէ՛ք արեւին՝ գոյիսը ու սիրքը ծածկուած:

Պիտեցէ՛ք նախ առաջ եւ երեկոյ 5 վայրկեան — կէս օրէ առաջ եւ վերջ — եւ ամէն օր 5 վայրկեան երկարեցէ՛ք յուսափայլ արեւի յոյսն ու կրքն:

Օգտուեցէ՛ք արեւի վառվառ հառազայր-

նեւէն, երբ ձեռք բերուածն ենք կը մտնեն  
անհրաժեշտ: Պատահանները ամբողջովին բաց,  
հիւրասիրեցէք, ձեզ անողորմիւն ու կեանք  
կը բերեն: Օգտուեցէք արեգակէ պատշգամէն,  
պարէզէն, դառերէն ու ծաղկերէն:

Ճարտարապետներուն կը յանձնարարուին  
տան դերասանները հարաւի կողմը գեղեցիկ, ար-  
պէտքի նամանատան մանուկները կարեւոր  
օգտակար արեւի լուսանմանն հառապայքնե-  
րէն: Արեւի սկիւնիայի հեղեղներուն մէջ յանախ  
ու կանոնատար կերպով յոգոյ մանուկները ոչ  
միայն առողջ կը մեծնան, այլ գեթ կը մնան  
նաեւ սկիւնիայի ստիպման, անհամար ջրայնոտ-  
րիւններէ եւ ջրացնումներէ:

Արեւակէզ մարմինը ուղեղն ալ կը զօրա-  
ցնէ: Այսպէս ուժով յամ առողջամտ պատ-  
հան, անախտակիր երիտասարդութիւն մը կը  
ցուցադրէ: Ապագան ասոնց բնորոշ ճարտար  
պնդակազմ պատրաստ արեւի հասցնէ եւ նուր-  
բէ համօրէն մարդկութեան:

Արեւէն օգտուող առողջ ամբողջ մանուկը,  
յանախ բժշկական հսկողութեան ու զարմա-  
նովի պէտք չունենար:

Լուսապայծառ արեւը ոչ միայն առողջ  
մանուկը ալ աւելի բաշտառողջ կը մեծցնէ, այլ  
նաեւ յեամանց եւ վատած մանուկը գրեթէ  
միշտ կը բժշկէ:

Առանց արեւի մանկութիւնը երկարատեւ  
վիճումն է անապագայ:

15 Յուլիս 1928 ՏԻՔՐ. Ա. Ն. ՄԷՋՊՈՒՐՆԱՆ

ՀԻՆ ԳԷՄԷԼԵՐ

ՏԻՔՐԱՆ ԶՈՒՀԱՃԵԱՆ

Փափաքելով վերակենդանացնել մեծ ար-  
ուեստագէտը, սիրով կ'ընծայեմ ընթերցողներու  
անոր հակիրճ կենսագրականը:

Արեւելիան երաժշտութեան փառքն եղած է  
Տիքրան Զուհաճեան, որուն «Լէպլէպիճին» ամէնէն  
աւելի ընդհանրացած դուստ-  
րները ութիւնն է:



Տիքրան Զուհաճեան  
կարգաւորուած է տղան Մանձունի անունը  
հասակի վարպետի մը, դաշնակի դասերու համար:  
Այդ դասերը անբաւական էին անոր բնական ձգկ-  
տունները զոհացնելու: Ուստի հայրը զանի կը յղէ  
Միլանու մեծ երաժշտանոցը՝ արուեստը կատարե-  
լագործելու հոն: Զուհաճեան չորս տարի աշխատե-

Այ՛ վերջ կը դառնայ Պոլիս ուր դաշնակի դասեր կ'աւանդէ ու հեղինակութիւնն Կ'ընէ: (\*)

Ահա յաջողակ վերլուծում մը Չուհաճեանի երաժշտական տաղանդին:

Չուհաճեան միայն գիտցաւ տալ արեւելեան երաժշտութեան նոր ձեւ մը, որով զայն սլաշաճելի դարձուց իտալական նուագախումբին եւ իր դաղափարներուն ինքնատուութեամբը, իր ոճին թարմութեամբն ու իր խմբիդասարանութեան դուռնադեղութեամբն՝ ուր կարծես թէ Արեւելքի արեւուն ճառագայթը կը փայլի. իր արուեստը հասկընալի դարձուց օտար հասարակութեան եւ իրաւունք ունեցաւ այն հզօր համակրութիւններուն զոր ենք կ'ստանար ամէն կողմէն: (\*\*)

Չուհաճեանի առաջին գործը եղաւ Արշակ Բ., ներկայացուած առաջին անգամ Բերայի նաուսի թատրոնին մէջ մեծ յաջողութեամբ, որմէ քաջալերուած՝ հեղինակը բոլորովին նուիրուեցաւ այս ասպարէզին:

Իր երկրորդ գործը եղաւ Օլիմբիա, հեղինակութիւն թովմաս Թէրզեանի, որուն զանազան

(\*) Այս տեղեկութիւնները բաղուած են Օննիկ Սարբեանի ընտիր գրութենէն: (Տես Բիւզանդիոն ՃԲ-1907 նոյ. 16, 17 (Հ. Տ.) թիւ 3387—8):

(\*\*) Տես Կոռնկ զեղարուեստական հանդէս, Ա. Տարի թիւ 2 1905 Փարիզ:

հատուածները Վիեննայի եւ Նափօլի նուագահանդէսներուն մէջ նուագուելով հայ երաժիշտին տնունը հռչակեցին:

Աւելցնենք թէ ձախողութեան ալ իր գործերու յաջողութեան հետ զուգընթաց եղած են, այնպէս որ Օլիմբիան ամբողջ աւարտած եւ Պալեան Սարգիս պէյի ընկալարանին մէջ անոր վերջին փորձերը կ'ըլլային եւրոպական խումբին կողմէ Բերայի նաւումի մեծ թատրոնին մէջ ներկայացուելու համար: Եւ այդ փորձերուն ներկայ ելողներէն նոյն ժամանակի ծովային գործոց սլաշաճման ինտելիթ փաշայ մօտենալով վարպետին իր դահուսակութիւնը արտայայտած է հետեւեալ բառերով. «Ծովային մարդիկ ընդհանրապէս քարատիր մարդիկ կ'ըլլան, բայց ձեր օբէրային մեղեդիներն արդարեւ յուզեցին սիրտս»:

Սակայն, աւա՛ղ, Բերայի մեծ կրակը լափեց թատրոնը, մարեց Չուհաճեանի յոյսն եւ ուրախութիւնը:

Բարեբախտաբար Օլիմբիայի ձեռագիրը ամբողջ մնացած է: Չուհաճեան ասկէ յուսահատ դարձեալ սկսաւ դաշնակի դասերով դասիւլ, բայց հարկ էր իր տաղանդը փայլեցնել, ստացնել իր երաժշտական հանձարը: Ուստի առանձին խումբ կազմակերպելով, սկսաւ ներկայացուցնել տալ Պոլսոյ Միսաֆիրիսանէի թատրոնին մէջ:

Այսուհետեւ յաջորդաբար գրեց երեք հատ

գուսաներգութիւնները, Աբիւհիմի կիլիկի, Վեռուէ  
 քէնեսա եւ Լէպոկալիի, ճօրօր աղա: Ասոնցմէ  
 Լէպոկալիճին ներկայացուեցաւ Բերայի գաղղիական  
 Թագորանին մէջ իսուսն բազմութեան մը առջեւ,  
 մեծ մարամբ եւրոպացի, որոնք արեւելիեան  
 երաժշտութեան եւրոպականին հետ խառն  
 ներդաշնակութիւնը վութացած էին վայելիւ  
 իր խումբին կազմակերպութեան համար հիա-  
 ցողներէն Մելիքեան Էֆ. 1500 սոկիի գումար  
 մը տրամադրած էր, սակէ քաջալերուեցաւ, բայց,  
 աւա՛ղ, զո՛ւր ջանք, անօգուտ վատակ, որովհե-  
 տեւ Օրթաքէօյի Տրդէճը մօտիկ դարձուց իր ամ-  
 բող գոյթերը, ձեւագործները, եւն, եւն: Ասոր  
 վրայ պահ մը յուսահատած ու ապուստի պէտ-  
 քէն ստիպուած նորէն սկսաւ իր դաշնակի դասե-  
 րուն, բայց գեղարուեստի սէրը կը մղէր զինք ար-  
 տադրել շարունակ. հեղինակից Զէմիլէն, որ քանիցս  
 ներկայացուեցաւ եւ մեծ յաջողութիւններ ունե-  
 ցաւ Ադիէ քաջալերուած Բարիզ դնաց իր գործը  
 Բարիզի մեծ Օքէրային մէջ ներկայացնելու. Բայց  
 առ այդ մեծ ծախքի կը կարօտէր, որուն չէր նե-  
 րէր, իր կարօտագին վիճակը իրեն օգնու-  
 թեան հասաւ Էֆնեսեան Գաբրիէլ եւ խոստա-  
 ցաւ ամէն նիւթական գոհօգութիւն զլանալ, սա-  
 կայն յիշեալին մահը վրայ հասնելով, վարպետին  
 յոյսը ի դերեւ ելաւ:

Բազցր է ինձ յիշատակել այս առթիւ մեծ

վարպետին դասախօսութիւնը իւսկիւտարու ձեմա-  
 րանին մէջ 1882—3 Թուականներուն՝ աւսուցչու-  
 թեան առաջին տարիներուս եւ անոնց ազդած  
 հմայքը ու ոգեւորու-  
 թիւնը այդ նուիրա-  
 կան կրթարանին մէջ:



Չուհաճեանի տա-  
 դանդը ցվերջ դնա-  
 հատուեցաւ ու վա-  
 ոււորուեցաւ վեհա-  
 պետներու պատուանը-  
 շաններով, ինչպէս Սան  
 Սթէֆանոյի մէջ Թուր-  
 քօ-Ռուս դաշնագրի  
 կնքումէն վերջ Նիքոլա  
 մեծ դուքս անձամբ

**Մահաւճան Զուհանեանի** անոր պատուանշան  
 շնորհեցի Բայց ազդա-  
 տութիւնն ալ իրմէ անբաժան մնաց, թէւ ան-  
 յաջողութիւններու պատճառաւ ուղեց դասերով  
 զբաղել դարձեալ, բայց ծերութիւնը ճնշեց զինքը,  
 չըլլալով խնայասէր ու ապագայի մասին կան-  
 իասօք՝ իր շահած դրամները չապահովեցին իրեն  
 դիւրակեցութիւն որովհետեւ արուեստին սէրը մի-  
 այն ունեցաւ եւ նիւթական պայմաններու մարդը  
 չեղաւ ու կարօտ վիճակի մատնուեցաւ ու հիւան-  
 դանալով անկողին ինկաւ Դէմքին վրայ վերք մը

հանելով երկու ամիս տառապեցաւ խեղճ վարպե-  
տը, մեռաւ թշուառութեան մէջ, բայց իբր հեղ-  
նանք մը հանրային անտարբերութեան արժանա-  
ցաւ մեծօրհնակէս յուզարկաւորութեան: Անշուշտ  
մեծ երգահանը վերջին պահուն գոչած է Պէթհո-  
վէնի նման, «Քեզի համար դուրսէն երջանկութիւն  
չկայ, դու ամէն ինչ քու մէջը պիտի ստեղծես.  
բարեկամ միայն դադարարական աշխարհին մէջ  
պիտի գտնես»:

Ու յուրիտեան արուեստին բարեկամ մնալով  
վահեց 1898 Մարտ 10ին աչքերը, իր յոյնած մար-  
մինը հանդէսեցնելով իզմիրի աղբ- գերեզմանատու-  
նը, ուր մահարձան կանգնեցին իր համակիրներն  
Յարութիւն Սինանեան եւ Սմբատ Քէսէճեան, ա-  
նոր հեղինակած «Օլիմբիա»ի վաճառման հասոյթով:  
Խորի՛ն մեծարանք արուեստի այս եղական  
դիւցազնին:

Ս. Գ.




**ԵՐԱՍՏՏՍԿԱՆ**

**ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՈՒԹ ԶԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԱՆՈՆՅ**

ԴԱՐՁՈՒՄԻ ԵՒ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՒՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ

ՄԱՍԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ



**Նախարան.**— Եկատելով որ եկեղեցական  
ուխը ձայներուն եւ անոնց դարձուածքներուն հա-  
մապատասխանող, ինչպէս նաեւ անոնցմէ դուրս  
եղանակներուն անուանց եւ անոնց կազմութեան  
մասին ցարդ ո՛րեւէ ուսումնասիրութիւն չէ հրա-  
տարակուած, փափաքեցայ գրիլ ներկայս:

Մեր եկեղեցական բոլոր երգ-եցողութիւննե-  
րը եկեղեցական ուխը ձայները եւ անոնց դար-  
ձուածքի եղանակներուն մասը կը կազմեն. ասոնցմէ  
զատ, կան նաեւ կարգ մը եղանակներ սրմնք եւս  
թէպէտեւ մեր եկեղեցական եղանակներուն մասը  
կը կազմեն, բայց ուխը ձայներու եւ անոնց դար-  
ձուածքի եղանակներէն դուրս կը մնան:

Ուրեմն ձայներու դասաւորութեան կարգաւ,  
նախ կը սկսիմ խօսիլ եկեղեցական ուխը ձայներու  
եւ անոնց դարձուածքի եղանակներուն մասին:

Ուխը ձայն եղանակներուն անունները ա-  
սոնք են:

ԱԶ.— Առաջին ձայն

ԱԿ.— » կողմ

ԲԶ.— Երկրորդ ձայն

ԲԿ.— Աւագ կողմ

ԴԶ.— Երրորդ ձայն

ԴԿ.— Վառ »

ԴԸ.— Զորրորդ »

ԴԿ.— Վերջ » եւ ասոնց դարձուածքները:

ԱԶ. Առաջին ձայն.— Սոյն եղանակը կը համապատասխանէ «**ՀէՔր սիւկիտահ**» եղանակին որ կը կազմուի հետեւեալ ձայնանիշերով (նօթա).  
րէ, so, սի, so, րէ, so, սի, լա-սի, so, եւ կը վերջաւորի so սիւէզի վրայ:

Իսկ դարձուածքն ալ որուն «**Նէճապուր**» անունը կուտան կրկին սոյն ձայնանիշերը գործածելով սոյնի վրայ կը վերջաւորի, սապէս րէ-մի, րի-տօ, սի, որմէ վերջ իրեն յատուկ երգելակերպովը (Սէյր) կ'երգուի:

ԱԶ.ի դարձուածքը՝ իր երգուածքին մէջ ունի տարբեր ձեւ մըն ալ որուն կ'ըսուի **ՆէճարուրէՔ** որ միւնչեւ լա, կ'իջնէ սօլի տպաւորութիւնը թողով ունկնդիրին վրայ:

Ծանօթ — Թէպէտեւ ըստ Արեւելեան երաժշտութեան կանոնի սոյն եղանակաց կազմութիւնը վերեւ ցոյց տրուածին պէս է եւ ըստ այնմ ալ կը գրուի, սակայն եկեղեցական երաժշտութեան մէջ՝ դիւրութեան համար. Աձ. առաջին ձայն կողանակը բուն սոյնի եւ դարձուածքն ալ «լա»ի վրայ կը գրուի, ճիշդ ըսուածին պէս:

ԱԿ. Առաջին կողմ: Սոյն եղանակն «**Սիկիտահ**» եղանակէն, որ կը կազմուի հետեւեալ ձայնանիշերով սօլ՝ սի, սի, տօ: Սի-լա, սօլ լա, սի» եւ կը վերջաւորի «մի»ի վրայ՝ իրեն յատուկ երգելակերպով, իր ամենավերջին վերջաւորութեանը մէջ. իսկ տուներու վերջաւորութեանց ատեն, «սի»ի վրայ կը վերջաւորի, դարձեալ իրեն յատուկ երգելակերպով «սի»երը բուն «սի» ըլլալու պայմանու: Դարձուածքն ալ թէպէտեւ ԱԿ. եւ **Նիլ** էիւճը եղանակին պէս «մի»ի վրայ կը վերջաւորի, սակայն բուն **Նիլ էիւճը** եղանակի երգելակերպէն աւելի **Ս.ՆէՔ** եղանակին երգելակերպին նմանելուն համար աւելի յարմար պիտի ըլլայ ըսել **Շէսա** 2)էն **Ս.ՆէՔ** եղանակ որ սակայն դարձեալ «մի»ի վրայ կը վերջաւորի գործածելով հետեւեալ ձայնանիշերը. լա, Սի, Տօ, լա: Բէ, տօ-սի լա-սի իմ:

(2) **Շէսս** կ'ըսուի եղանակի մը այն ձեւին որ իրեն յատուկ ձայնատիճաններէն տարբեր ձայնատիճաններու վրայ գրուած՝ կ'երգուի կամ կը նուագուի, որուն ունկնդիրը — եղանակի տեսակէտով — միեւնոյն եղանակը լսած կ'ըլլայ, բուն փոխուած ձեւով. ասոր կրնանք ըսել նաեւ **ձայնաւորչութիւն** կամ **ձայնափոխութիւն**:

Օր. Ա.— լա, սի, so, րէ, so, սի, լա, so, սի, լա:

Բ.— Բէ մի ճա ուլ ճա մի րէ ճա մի րէ: Սոյն օրինակին մէջ, Բ.ը՝ ձեւը առաջնոյն **Շէսս**էն ելած ձեւն է: Սիերը պէ՛մօլ, **so**երն ալ **so**սիեզ, միերն ալ միպէ՛մօլ ճաերն ալ ճա-սիեզ պէ՛տք է ըլլան:



ԲԶ. Երկրորդ ձայն: Սոյն եղանակն ալ կը համարատարտարանէ Հիւսէյնի եղանակին՝ որ իր կազմութեան ատեն կը գիծէ հետեւեալ ձայներուն. լա-րէ, տօ-րէ, մի ֆա (Ս.Նէ.Մ) մի-րէ, տօ-սի, լա-րէ, տօ-րէ, մի: Եւ կը վերջաւորի Ս.Նի վրայ, միշտ իրեն յատուկ եր, ելակերպով. իսկ դարձը-ուածքն ալ որուն Եւհիսզ կ'ըսուէ, իր կազմութեան ատեն կը գիծէ հետեւեալ ձայնանիշերուն սօլ տիէզ, (շէ-Ննազ) ֆա (աճէՄ) մի, ուր տիէզ ֆա մի, րէ, տօ տիէզ րէ-մի, րէ, ֆա մի: Լա (մօճՏալ-յէր) լա, սօլ, ֆա, սօլ լա եւյն, կը վերջաւորի սիսի (հիւսէյնի) ի վրայ, իրեն յատուկ երգելակերպով՝ տըններու վերջաւորութեանց ատեն. իսկ ամենա-վերջին վերջաւորութեան մէջ Ս.Նի ախկեսի վը-րայ կը վերջաւորի. դարձեալ իրեն յատուկ երգելակերպով: Սոյն եղանակը (Շէ-Ննազ) իր հրգուած ատեն, շենկերին վրայ գերթէ ճիշդ ԳԶ. երրորդ ձայն եղանակին տղաւորութիւնը կը թողու որուն համար շէ-Տէն հիւսզ ալ կ'ըսուէ. որուն ամե-նակերպին վերջաւորութիւնը եւս «լա» է (տիւկես)՝ Տարբեր եղանակի օրինակ մըն ալ.

Սօլ սի րէ սի րէ սօ սի լա սի  
 սօ մի ուր մի սօլ ճա մի րէ մի:

Այս օրինակին մէջ ալ բոլոր ձայնանիշերը բնական ձայներէն միայն ճան (Ս.ճէՄ) է:

«Սի» երը վուսելիք ըլլալու պայմանաւ, իսկ տըններու վերջաւորութեանց ատեն վուսելիք «սի» վրայ կը վերջաւորի:

Եւ որուն մասին պիտի խօսինք իր կարգին ԳԶ եղա-նակի բացատրութեան մէջ: Մեծ պահոյ Գ. Կ. շաբ-թուան մէջ երգուած «Ճանապարհի» էն ուղիղ եկն՝ հարցը եւս Բ. Կ. դարձուածքը, որուն հիւսէյնի վուսելիք կ'ըսեն, ինչպէս նաեւ անալիզն զան ճեճ է:

Բ. Կ. Աւազ. կողմ.— Սոյն եղանակն ալ կը համարատարտարանէ Ս.Նէ.Մ եղանակին՝ որ իր կազմութեան ատեն կը գիծէ հետեւեալ ձայ-ներուն. տօ, ֆա (աճէՄ) մի, րէ, տօ, (տիսզ) րէ, ֆա, մի, րէ, մի րէ-տօ (տիսէզ) րէ, եւ կը վերջա-ւորի «տօ» (տիսէզ) «րէ» ուր իսկ Արեւելիան աշ-խարհիկ երած շաբթուան մէջ միշտ «լա» զվայ կը վերջաւորի: Այսուհանդերձ եկեղեցական երած ըշ-տութեան մէջ ալ երբեմն միշտ «լա» կ'իջնէ եր-բեւ ցոյց մը թէ «լա» զվայ հանդիստ մը կարելի է կամ պէտք է առնել. բայց բուն վերջաւորու-թիւնը միշտ «տօ» տիսէզ, րէ ի վրայ է:

Իսկ գալով դարձուածքին, երկու կերպ է. մին շէ-Տէն Սէկեսի եղանակ է. «ի գալատեան տեաւն դրունք երկնից բանին» ինչպէս որ իր կազ-մուտի տօ, մի, տօ, մի մի սօլ ֆա (աճէՄ) սօլ, ֆա, սօլ, լա սօլ-ֆա մի-րէ (տիսէզ) մի եւն. ձայներով իսկ միւսն ալ շէ-Տէն հիւզով եղանակ. «Ամենայն արարածք համբաւնալով զճեւս ձերսին պէս. ո-րուն երգելակերպն է. սօլ ֆա մի-րէ րէ տօ սի տօ րէ մի-ֆա մի րէ րէ մի րէ տօ րէ մի եւն: Այս եր-կու դարձուածքին բուն վերջաւորութիւնն ալ ու սիւղ րէ: ի վրայ է (սոյն վերջի օրինակին մէջ գոր-

ծածուած Ճանքը, միերը, ճա սիէզ մի պէ՛սօյ  
Էլի՛ն հիսար պիտի ըլլան:

ԳԶ. Երբորդ ձայն. — Սոյն եղանակն ալ կը  
համապատասխանէ դարձեալ հիճազ եղանակին՝ ո-  
րուն տօերը, թօ տիեէզ եւ սիերն ալ սիպէ՛սօյ որ  
իր կազմութեան ատեն կը դիմէ՛ ըէ, սօ, սի, լա,  
սօլ, սօ սի լա նաեւ ձայներուն կը վերջաւորի (նէ-  
վա)ի վրայ. իսկ վերջնական վերջաւորութիւնը լա  
է: Դարձուածքն ալ որուն էլիին (Փա աիեէզ) ա-  
նունը կուտան իր կազմութեան ատեն կը դիմէ՛ ըէ,  
ըէ, սօլ-Փա մի. սօլ Փա մի սօլ Փա ըէ ըէ-մի Փա՛  
եւն. ձայներուն եւ կը վերջացնէ ԳԶ ի վերջաւո-  
րութեամբ լաի վրայ. սակայն սկիզբէն մինչեւ  
վերջն դարձուածք եղող եղանակներուն վերջաւո-  
րութիւնն ալ ճա (Արադ) կ'ըլլայ. ինչպէս Չքեզ-  
օրհնմօթ ազաւոր յաւիտեանց չարցը:

ԳԿ. Վառ ձայն. — Սոյն եղանակն ալ կը հա-  
մապատասխանէ Սապա եղանակին որուն բէերը,  
բէ պէ՛սօյ կ'ըլլան եւ որ իր կազմութեան ատեն  
կը դիմէ՛ հետեւեալ ձայներուն լա, սի, սօ, ըէ  
սօ. ըէ տօ սի լա եւ կը վերջաւորի լաի վրայ: Ասոր  
դարձուածքին ալ կ'ըսուի, Սապա զէ՛զէ՛մէ, ո-  
րուն Սապա եղանակէն սենցած տարբերութիւ-  
նը, փոխանակ սիի սիպէ՛սօյ եւ սօի սօ սիեէզ  
գործածելն է որ դարձեալ լաի վրայ կը վերջաւո-  
րի: Աւարէնիկետար եղանակն ալ որ սոյն Սապա  
եղանակին ճաի (Արադ) վրայ վերջաւորող ձեւն է,

կրնայ նկատուիլ նաեւ վառ ձայնի դարձուածք:  
Տիւկիտի եղանակն ալ վառ ձայնի շատ մօտ ե-  
ղանակ մըն է

ԳԶ. Չորրորդ ձայն. — Սոյն եղանակն ալ կը  
համապատասխանէ ըսճսիտին եղանակին որ եր-  
բեմն սիին տեղ վուսէլիֆ եւ տօին տեղ ալ տօսի-  
էզ կը գործածէ եւ կը դիմէ՛ լա սի տօ ըէ մի  
ճա-մի ըէ տօ ըէ: ձայներուն որուն վերջաւորու-  
թիւնն ալ լա է: Ասոր դարձուածքն ալ կը համա-  
պատասխանէ հիւզզամ եղանակին:

ԳԿ. Վերջ ձայն. — Սոյն եղանակն ալ կը  
համապատասխանէ իւլլուզ եղանակին որ ամբողջ  
ձայներ կը գործածէ, երբեմն ալ ցած ճա (կէ-  
վէս) եւ որ իր կազմութեան ատեն կը դիմէ՛ սօլ,  
տօ, տօ-սի, լա սի, ըէ-տօ, տօ սի, սի-լա լա ձայ-  
ներուն որուն ամենավերջին վերջաւորութիւնն է,  
ըէ (եէկիտի) ձայնագիրը: Այս եղանակին դար-  
ձուածքը մի քանի ձեւի վրայ է, որոնց երկուքը  
սօլի վրայ շէ՛տէն հիմազ եղանակին. «վասն մե-  
սոյ վրկութեան» եւ «հայր առաքող միածնի» ո-  
ղորմաներուն պէս. միւս ձեւն ալ «Յիսուս միածին  
անմահութեանց» Ղաղարու յարութեան մանկունքն  
է: Վերջ ձայնի սոյն ձեւերէն զատ կան նաեւ ու-  
րիշներ ալ, օր. Ծննդեան Դ. րդ օրուան «ողորմեան»,  
«Ըզքեզ աղաչեմք» որ շէ՛տէն հիւզզամ եղա-  
նակ է սա ձեւով. սօ սի տօ ըէ տօ սի լա սօլ  
լա տօ սի եւն. եւ կը վերջաւորի ըէ (եէկիտի) ձայ-  
նագիրին վրայ:

Ահա ուրիշ ընդունում՝ եղանակներն ալ քառ. սոյն եղանակը կը կազմուի հետեւեալ: ձեւով, սօլ, սի ըէ, սօլ ֆա, մի, ըէ մօ, սի, ֆա, սօլ եւ կը վերջաւորի սօլի վրայ: Սոյն եղանակին վրայ շինուած են, «մեղեդի» (բանին Հօր Յոգոյ) «Ամէն հայր սուրբ օրհնութիւն» եւ «Տէր սղորմեայ» (Լեւոն էֆ. Խանձեանի) Սաղմոս սասցէքով:

**Սուզինաւ.** Սոյն եղանակին: կազմութիւնը կազմութիւնը կը սկսի մօ, ըէ սի եւ կը գործածէ բուն սի, մի պէտքով ճա սիիէզ եւ կը վերջացնէ սօլի վրայ: Սոյն եղանակին վրայ հանդուցեալ մեծ վարպետ Համբարձում Չէրչեան «Տէր սղորմեայ» մը ունի. որուն ձեւերնսուրբը եւ Օրհն աղբարցեալ Արամ Խանձեանը շինած է:

**Նէկալիւն.** — Սոյն եղանակին կազմութիւնը մի մո՛, ձեւովն է.

Սօլ ըէ մօ մի ըէ մօ սի լն սօլ լա մօ սի լա լա սօլ, սօլ ֆա սօլ (վերջաւորութեան միերը մի պէտքով սիերը սպէտօլ, ճան ալ սիիէզ պիտի ըլլան: Եկեղեցական երգեցողութեանց մէջ սոյն եղանակին նուիրագործողը եղած է հնգը. 2. Չէրչեանը, իր յօրինած «միջբան ճարտարահիւս սեւեւ խաղաղութեան» քարոզներով, պէտքըներով, ինչպէս նաեւ Լ. էֆ. Խանձեան իր «Ամենասուրբով «Օրհնութիւն»ով եւ «Տէր սղորմեայ»ով Չմուսամ նաեւ յեշտու երաժշտապետ Տիար Գ. Զուլհատեանը

որ սոյն եղանակին վրայ յօրինած է «Ս. Պատարագի» երգեցողութիւն մը:

**Անէմ աւիրան.** — Սոյն եղանակին վրայ յօրինուած է մեր եկեղեցեաց մէջ դարերէ ի վեր երդուող «Գոհանամք ըզքէն Տէր» «Բաշիելով ըզմարմին», «Եւ կեանք անձանց մերոց»: Այս եղանակէն է նաեւ «Այսօր սղբային» յարութեան մեղեդին: Իսկ իր կազմութիւնը հետեւեալ ձեւովն է. (աճէմ) լա, սօլ, ֆա, մի, ըէ, մօ, սի (սի պէտքով) լա, սօլ, ֆա: Պէտք Անէմ (վերջաւորութիւն) եւ Է հարկին կը գործածէ «օտիիէզ (սասլա) եւ լապէտօլ ձայները:

**Հիւզգում.** — Սոյն եղանակն ալ իր կազմութեան մէջ շատ անգամ ըէ, Գեղմէն սիտելով կը գործածէ սի եւ սիպէտօլ, ճասիիէզ ձայները եւ կը վերջացնէ սիի վրայ, իրեն յատուկ ձայնի շրջանը (սէյր) կատարելէ վերջ, Հնգը. երաժշտագէտ Գաբրիէլ Երանեանի «Այսօր մեռեալ» յարութեան մեղեդին, Լեւոն էֆ. Խանձեանի «Տէր սղորմեայ» յարութեան «Ալէլուաներ եւն. սոյն եղանակէն են:

**ԳԱՐՃԸՂԱՐ.** — Սոյն եղանակն ալ կը կազմուի սա ձեւով: Տօ, ըտով կ'ըսուի մի պէտքով ճա սիիէզ ձայները կը գործածէ եւ լաին վրայ կը վերջացնէ: Լեւոն էֆ. Խանձեան սոյն եղանակէն յօրինած է «Տէր սղորմեայ» մը եւ «սաղմոս սասցէք»:

**Նէվէտէր.** Սոյն եղանակին կազմութիւնը գրեթէ ճիշդ **ճեհալէնտի** պէս է միայն թէ ասոր տօնը՝ **so aphelq** կ'ըլլան Յայտնի երաժշտազէտ խանձանի աշակերտակից **Մ. Մէրկէրեան,** այժմ **Եգիպտոս,** սոյն եղանակին վրայ յօրինած է. **«Ամենասուրբ, Օրհնթ. եւ Տէր ոգորմեայ»** մը:

**Չարկեախ.** — Սոյն եղանակին կազմութիւնն ալ հետեւեալ ձայներուն դիմելով կը կատարուի եւ **սօէն** սկսելով **սօի** վրայ կը վերջացնէ՝ **սօ, ըէ, սօ, սի, ըէ, Փա (սէճէտ) մի, ըէ, սօ, ըէ, սօ, ըէ, սօ, սի, սօ:** Առաջին ձայն Վատեա **Տէր»** կանոնադրուելը այս ձայնին վրայ ալ կ'երդուի, ինչպէս նաեւ մահու դատեանն Աւագ շք. առաջա եւ սոջորական ննջեցելոց շքատեանն ի հարկին:

**Խօրասանի.** — Սոյն եղանակը բձ. եւ դձ. եղանակներու կազմութենէն յառաջ եկած եղանակ մըն է: Այս եղանակէն են շի քեզ **Տէր յուսացայ»** բձ. կանոնադրուիին մէկ ձեւը եւ շքարձ անձն իմը **«սիրեցի»** միտին:

**Հինագիւար.** — Սոյն եղանակը մեր կեկոյց. երաժշտութեան մէջ դործածուած եղանակներուն ամէնէն նուազ դործածուածն է, իր կազմութեան բերմամբ. նշանաւոր երաժշտագէտ եւ երգահան **հնգեցի.** Աստիկ Համամճեան սոյն եղանակին վրայ յօրինած է շատ ճարտար կերպով **«Ամենասուրբ, Օրհնթ. եւ Տէր ոգորմեայ»** մը:

**Ա.Ա.ՐԱ.ՀԱՄ Ա. ԲԻՆՅ. ԷՊԷՆԱՆ**

**Հակիրց կենսագրական**

**Տէր Ա.Ա.ՐԱ.ՀԱՄ Ա. ԲՂՆՅ. ԷՊԷՆԱՆ** ծնած է 1869 Հոկտ. 19ին Սկիւտար Սէլամիէ թաղը. նախնական ուսումն ստացած Նոր Թաղի ձեմարան վարժարանը, ուր կրօնի ուսուցիչ ունեցած է Մատթէոս Եպիսկ. Իզմիրլեան, իսկ հայերէնի մասին աշակերտած է Տարեցոյցիս հնդիակին Գպիր ի տղայ տիոց, սիրելի ամէնուն իր համբոյր բնաւորութեամբ, դպրոցէ հըրածարեւէն վերջ հոգ տարած է իր ինքնազարգացումին, մասնաւոր դաս առնելով հանդուցեալ աչազուրկ կէօզիւրեան:



**Տ. Ա.ՐԵ. Ա. ԲԵՅ. ԷՊԷՆԱՆ** Թաղէոս պատուելիէ, իսկ երաժշտութեան ուսուցիչն եղած է նշանաւոր երաժշտագէտ Լիււոն խանձեան: Բաւական տարիներ Առաքել Թօզլեան գրտան վարիչը եղած է լաւ զարգացուցած ըլլալով թուրք լեզուի ուսումը, ժամանակ մը երաժիշտ-ուսուցիչ եղած է Ս. Խոյ եկեղեցւոյ եւ 1900 Յուլիս 30ին նոյն եկեղեցւոյն վրայ քահանայ ձեռնադրուած է Գրիգոր Եպ. Յովհաննէսեանէ, հոն քսանը չորս տարի պաշտօն վարելէ վերջ, ներկայիս Ազգ. Պատրիարքարանի հրամանաւ չորս տարիէ ի

վեր կարգուած է Գնալի Տողեւոր հովիւ Անդա-  
մահցած է վարչական ժողովներու եւ տեսուչ խոր-  
հուրդներու, ինչպէս նաեւ Իւսկի Իտարէի եւ Չին.  
Տողովներու 14 տարի շարունակ իբր ներկայացու-  
ցիկ Ազգ. Պատրիարքարանի միջնէ 5 տարի առաջ  
Եղած է ուսուցիչ կրօնի, հայ եւ Թուրք լեզուներու՝  
Ս. Իրաչի եւ Գնալի Ազգ. վարժարանները Յօրինած  
է եկեղեցական, ազգ. երգեր, ունի երաժշտական  
գործեր եւ Թարգմանութիւններ նշանաւոր Թուրք  
գրագէտ բանաստեղծ Նաշիտ Չըլա պէշի գրուած ք-  
ներէն հանդերձ կենսադրութեամբ:

Տէր Աբրահամ հայր Պոլսոյ հայ եկեղեցական  
դասուն պատուաբեր անդամ է իր օրինակելի  
կեանքով եւ իր մարքուր անուշը չճնուցաններ մշտ-  
քերու մէջ որեւէ դայթակղական արարքի վեր-  
յուշում. երկուր կեանք այս բարի հօր:

Ս. Գ.

ՍՏԱՅԱՆՔ

Հերման Գլալէր. — «Գրական գրասնր» եւ  
«բարոյական դասեր. ազնիւ նկարագրի կազմութեան  
ընտիր առաջնորդ աշխատասիրութեան շատ խնամ-  
ուած լիզուով:

Գին 200 դր.

Նոյր կարելի է ըսել ԳէՌԳ ԱՐՔԵՊԻՈԿ. ԱՐՄ-  
ԼԱՆԵՆԻ այս երեք հոգի շահ գրքերուն «Գեղեցիկ  
անուշուածք» զին 60 դր. «Կեանքի դասեր» զին  
60 դր. «Աղուհացից եօթնեակը», զին 150 դր.:

ՎԵՐԱԳՈՐԶ ԲՈՒՆԻԿՍ ՀԱՅՐԵՆԻ

Բունիկիս մէջ Միթարակերտ գարուններ  
էի անցուցեր ըսանեւութիւն շոն էր ծլեր ու ծաղկեր  
մանկութիւնս նորաբողբոջ:

Կ'ապրէի հոն այնպէս հանգիստ ինչպէս  
կ'ապրի Թուշիկն Թեւերուն տակ տաքուկ իր մօր  
խանդակով:

Նով մը յանկարծ փչեց Արեւելքէն, Թափան-  
ցից ներքը բունիկիս, առաւ Թեւերուն վրայ: Օ'ն,  
բուս, տանիմ գքեղ հոն, ուր առաջին անգամ  
բացիր աչքերդ. Ե լոյս, ուր կը շողայ ամէն ինչ  
լոյսի մէջ, բնութիւնս գուարթագեղ, բոլորն այ-  
լազան եւ հրճուալից:

Բունդ ելաւ սիրտս շողովիչ այս ձայնէն հո-  
վիկին արեւելեանս, միամտութեամբ ազանիի նըս-  
տայ խոյնի Թեւերուն վրայ անոր Թուշուն, յուսով  
վերադառնալու ծիծեռնակներուն հետ բունիկս  
հայրենի, երբ սկսի փչել ձմեռն սաստիկաշունչ:

Հրաբորքք երեւակայութեանս սոյն վայր-  
կեանին՝ կրնա՞ր անցնիլ մտքէս, Թէ պանդխտու-  
թիւնս պիտի երկարէր հոն կարծածէս անլի, ծի-  
ծեռնակներն պիտի վերադառնային ամէն տարի  
բունիկն իրենց, եւ ես պիտի բոլորէի հոն ձմեռներ  
վեշտատան:

Երազած լուսադրելւոյս վրայ պիտի պայ-  
թէին փոթորիկներ տառապանքի ու պիտի հարուա-  
ծէին տունկը կեանքիս, պիտի դեղնէին ոստերն  
անոր դաւարագեղ, պիտի բռնային ճակտիս վրայ  
ակօսներս Ու սիրաս, սիրտս զգայուն, հեռու բու-  
նիկէս հայրենի, պիտի տոչորէր կարօտոյն ա-  
նոր Ո՛հ, կը հառաչէի երբեմն, պիտի տեսնե՞մ  
բունիկս հայրենի, պիտի համբուրե՞մ շիրիմը Մխի-  
թարիս:

Կապուտակին վրայ երկնքի երեւցաւ վերջա-  
պէս Կօտին ծիրանի, բարձունքներուն վրայ ձի-  
թենին սուրբ, խաղաղասփիւռ ոստերուն տակ ո-  
րուն՝ կազդուրուեցաւ տակաւ մարտինս փոթոր-  
կահարս Սիրտս սակայն կը մխար միշտ կարօտակէջ:

Յուլիս ամիսն էր տարւոյս **Սէմիրամիս**,  
խարխսի էր նետեր ծովափը Բիւզանդիոնի: Մօտե-  
ցայ իրեն ու ըսի. «ո՛ր երազավազդ **Սէմիրամիս**,  
տար զիս ալ հեռոգ, տա՛ր բունիկս հայրենի», ու  
նետուեցայ գերկն անոր՝ ինչպէս որդի մը իր մօր:

Սահեցաւ ալիքներուն վրայ **Սէմիրամիս**,  
ողջուննց երեք արշալոյս միայն, հասուց զիս մօ-  
տիկը բունիկիս հայրենի:

Ի՛նչ անոյշ էր, ո՛հ, վայրկեանն երբ հասած  
**Սան Նիփոլիպոյ**՝ տեսայ աշտարակը բունիկիս,  
ոստերու մէջէն ծառերուն նշմարեցի կարմրորակ  
որմերը մենաստանիս Մխիթարեանս:

Կարօտով երկար տարիներու կը դիտէի

վայրկենապէս դշխոյն Ադրիականի, ծովեզերեայ  
հրաշակեւրտներն անոր, դքսական եւ արքունի  
պալատները, **Ս. Մարկոսը**, անմահ հրապարակն  
անոր ու զանգահատունն երկնամօտիկ՝ իբր հին  
բարեկամներս մտերիմս Այլքերս սակայն, աչքերս  
կը դառնային միշտ դէպի բունիկս հայրենի, ու  
սիրտս կը արփէր ուժգին տեսութեամբն անոր  
մօտալուտ:

Տուի վերջապէս ողջոյն հրածեշտի **Սէ-  
միրամիս** նետուեցայ մէջը շոգեմակոյկին՝ որ  
սահելով խաղաղ ալիքներուն վրայ լճակին՝ հասուց  
զիս շուտով առջեւը բունիկիս, ուր՝ խուժքի մը  
պէս հրեշտակներու՝ էին կեցեր դրկաբաց հոգե-  
կիցներս անձկակարօտ: Ողջունեցի զանոնք գեր-  
կընդխառն: Աստուած իմ, ո՛րքան էին փոխուեր,  
երբեմնի վտիտ տունկն միոյն ստուարացի, սեւորակ  
հերքն միւսին ալեւորեր, եւ ո՛րքան ուրիշ նոր  
դէմքեր դեռաբունիկ, ի տես սրտնց յուզուե-  
ցաւ սիրտս, ու մարդարիտներ կաթկըթեցան աչե-  
րես:

Թափօրով բուրին առաջնորդուեցայ տա-  
ճարը Անմահին, երկրպագեցի, ուղղուեցայ ապա  
դէպի սեղանն աւագ, առջեւն սրուն ծալուեցան  
ծունկերս յանկարծ, խոնարհեցայ երկիր, ու շըթ-  
թունքներս հպեցան այնպէս շիրին Մխիթարիս:  
Համբուրեցի զայն, համբուրեցի անյաւօրէն, զո-  
վացաւ սիրտս, շիջաւ հուրը կարօտիս, ու բերանս  
մրմնջեց օրհնութիւններ Անմահին:

Փա՛ռք քեզ, Տէր, որ շնորհեցիր տեսնել ինձ կրկին բունիկս հայրենի, համբուրել շիրիմը Միւթարիս, ա՛ռ արդ հոգիս, եթէ կ'ուզես, զի իզձս էր միակ տեսնել ու մեռնիլ... Սոյն պահուս ի՛նչպէս, ո՛հ, զուարթացաւ յանկարծ հոգիս, ի՛նչպէս թիթեկացաւ մարմինս։ Չհանդ չած դեռ՝ վայրկեանի մը մէջ կ'ուզէի շրջել ամէն կողմը, կ'ուզէի տեսնել ամէն մէկ անկիւնը բունիկիս, որոնել սիրոյս յիշատակներն հին, զորս կ'երարզէի պանդխտութեանս մէջ երկարատեւ։

Նեղ ու երկայն սրահներուն մէջ եմ ահա մենաստանիս, կ'անցնիմ առջեւէն վեհ դէմքերու նախահայրերուս պանծալի։ Հոն են ահա Չամչեան եւ Աւետիքեան, Ազգերեաններ, Զախջախեան, Թամաճանեան եւ Բագրատունիին, Հիւրմիւզկեաններ եւ անմահն Ալիշան, ու իսումբն բոլոր նմաններուն, ի տես որոնց կ'ազեւորուիմ։

Քայլերս անզուսպ կը մտցնեն զիս շուտով մենաստանիս դրատունը հրաշակերտ, կը տեսնեմ հոն զմայլունով լոյս մտքերու արտադրած հազարաւոր հատորներն ստուար։ Քայլ մըն ալ առած՝ մէջն եմ ահա ձեռագրատան, խորշերուն մէջ որուն վեթակի մը պէս կեցեր են շարուած պաշտելի մեր նախնեաց ձեռագիրներն հնաբոյր, որոնց կը հպին իսկոյն շրթունքներս ջերմիկ, կը համբուրեմ զանոնք, կը համբուրեմ յարգանքով իբր մասունքներ սուրբ։

Կարօտս երկարամեայ չտար հանգիստ քայ-

ւերուս յոգնած, հը մղէ զանոնք, կը մղէ առաջ, եւ մէջն եմ ահա սպարանի, ուր կը գործէ մամուլն անդադար, կ'ընծայէ ընտիր գործեր։

Շրջան մըն ալ հուսկ մենաստանիս պարտեզին մէջ դրախտանման, հոխասուն դալարութեան մէջ որուն՝ կը բարձրանայ միտքն, կը հրճուի սիրտն, կը վառի երեւակայութիւնն։ Ծառուղիներն որուն են նուիրագործուած Ալիշանի շրջագայութիւններով հանապազօրեայ, ու մի բլրակն անմահացած այցելութիւններով մեծ Անգղիացւոյն։

Առջեւն եմ ահա Լորտ Պայրընի բլրակին, ձիթենիներուն ներքեւ որուն նստած՝ կը խողաղէր ան յուզումները սրտին, կը յղանար գազափարները մտքին։ Կը վրցնեմ մի քանի տերեւներ ձիւղերուն վրայէն անոնց, կը դնեմ յուշատետրիս մէջ։

Քանի մը քայլ առած՝ մէջն եմ ահա գերեզմանատան, դամբաններուն վրայ որուն կձեայ կը նշմարեմ անդրիները անմահանուն մեր հայրերուն։ Որոնց յիշատակներովն կենդանի կը լեցուի միտքս, հոգիս ու սիրտս, կ'իլյնայ յանկարծ գլուխս դամբարանին վրայ անոնց եւ շրթունքս կը մըմնջէ ի խորոց կարդացի։ Էութիւնս բովանդակ կ'իմանայ անդորրութիւն մը արտասովոր, կը զգամ որ վերագործեր եմ բունիկս հայրենի։

**ԽՈՒՐԻՆ, ՀԱՅԿԱՅՆ**

ՎՐԻՊԱԿ. — 128 էջին վերջին տողէն ճիշդ առաջ պէտք է աւելցնել. **Սէմիրամիա** շեղեցաւ յանկարծ, զնաց խարիսն նետեց ծովափունքը **Առիւծին Մ. Մարկոսի**։

### ԸՆՏԻՒ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Խոնարհ եղի՛ր՝ բայց ոչ սոսր.  
 Կամֆրոյ յարգէ՛ ալ ո՛չ խոսար...  
 Համեառ ապրի՛ր՝ բայց մի՛ սուգար,  
 Մախուր կաց մի՛ս բայց մի՛ շոգար:  
 Փողը սիւրէ՛ ալ մի՛ պաշտօնը,  
 Մարդոց պատուէ՛ բայց մի՛ կեղծիւր,  
 Մաս՛, խօսէ՛, ալ ոչ անհամ,  
 Լաւն արա՛ մի՛ս բայց ո՛չ անկամ:  
 Պարտէզներ չափի՛ր մի՛ վարդ կաղնուր:  
 Ծովերով անցի՛ր մի՛ մարդ հարելու...  
 Սիւրբոյ մի՛ սրբութեւն անպէտք շոքի մ՛պէս,  
 Կակարդոյ չափի՛ր մի՛ խօսք անելու...  
 Անցած բայէն՝ ես չի՛ դառնար,  
 Թօժում ծաղիկ՝ չի՛ գուարբանար,  
 Զուարթ հասի՛ր, մի՛՛ս լաւ խօսէ,  
 Լեզի գրոյցը չի՛ կաղցրանար:  
 Պարզ երեսալ եւ պարզ խօսիլ՝  
 Լա՛ւ է քան գոյն փոխել, կեղծել...  
 Համեառ ապրի՛ր՝ անիլ լաւ,  
 Բան միշտ ալոց երեսը ձեռնել...  
 Փարուն իւր հետ՝ առուն ունի,  
 Վա՛րդ՝ իւր հետ՝ փուշեր ունի,  
 Սէ՛րը իւր հետ՝ խար հանոյ՜թով՝  
 Հազար տեսակ խոցեր ունի...  
 Թէրան ԶԱՐԻԹԻԻՆ ԲԷՆ. ՍԱՐԶՍԵՍԷ

### ՎԷՏԱԻ ՅԻՇՍԱԿԻՆ



«Եթէ մարդիկ իմանային, սիրել սիրով ճշմարտ  
 Ձէին ըլլար դժբախտութիւնը վիշտ ու սանջանք  
 ցաւանիթ»:  
 Վ. Էտա

Անցեալ ապրիլի սկիզբէն էր երբ նամակ  
 ստացայ վաղեմի բարեկամս Տիգրան Անէմեա-  
 նից «Վէտա», որք Ռաբակից (Պարսկաստան)  
 հասնելով Վառնա կը գրէր իրեն անձնական  
 եւ ազգային գործերի առիթս Այս նամակը  
 կարդալիս կարծէիք թէ մի բայէ ազատ շունչ  
 փառեցի, սգեկոչելով, վերջապէս Տիգրանը հա-  
 սաւ իրեն նպատակին: Տարիներով կը ցանկար  
 զնալ Ռուզարիս հանգիստ կեանք վարելու:  
 Տասնեակ տարիներ էր չար բախտէն քնկել էր  
 Ռաբա կողմէն ուր կ'ապրէր՝ շատ խաղաղ  
 բայց եւ մտամոլոր: Գրեթէ զգուած էր իրեն  
 այս կեանքիցն ինչպէս եւ իրեն զբաղմունքիցն  
 սրպէս դեղավաճառ եւ կ'ուզէր իրեն ձեռա-  
 րեան օրերն անցնել խաղաղ մի անկիւն: Ռաբ-  
 առուն ունէր իրեն սեպտական կեդրոնական  
 դեղարանը Pharmacie centrale: Զնայած որ  
 շատերը կը նախանձէին Տիգրանի, սակայն ի-  
 ղին չհետայ ուրախ: Ես ունէր ներքին մի վիճ



որով կը մառուէր: Իրեն այս վիճակն անճանա-  
կան չէր, այլ հասարակական ազգային: Պէ՛տ է  
կարդալ իրեն «Յոյզեր» քանասեղծութիւններն  
ապա քէ հասկանալ եւ իրեն արտիքը: Բնիկ



Յուլիանոսի մեծցած եւ սըլ-  
ուած դպրոցական գրասեղա-  
նից սկսած քրոսկցում է զա-  
նազան քերթերին: Եւ 1898 թ.  
փորձում է գրել իրեն առա-  
ջին ստանաւորը Պոլսից ցիր  
ու ցան եղած հայ գաղթա-  
կանների քուտաւորեան մա-

Տիգրան Անէմեան սին որոնց հետ շփումներ է  
ունենում Շուճալում: «Մքէ

չ'լինէր այդ հանգամանքը (գաղթականների  
կեանքը 1896 թ.)» գուցէ ոտանաւոր չգրէի եր-  
բեք: Պժքախառքար խմ մէջ քիչ ապրեց գրե-  
լու սէրը: Ինչքան շուտ երեսան եկաւ այնքան  
էլ շուտ հանգաւ: «Վիլանի», (Պարսկաստանի  
հիւսիսային մի նահանգը Կասպից ծովի ափե-  
րին) խոնարարիւնն եւ ցեխերը մեզ գրեթէ մո-  
ռացուց քանասեղծութիւնն էլ եւ Ռաւաթի  
կեղտոտ քաղաքում դարձայ մի խանութպան:  
Քաջ, ս՞վ գիտէ, գուցէ աւելի լաւ է լինել մի  
խանութպան քան գէշ քանասեղծ: Մի հա-  
սարակ յաջող ոտանաւորը մի ամբողջ գիրք  
կ'արձէ:» Տիգրանի 104 քանասեղծութիւն-

ները — Յոյզերը — փառակազմ եւ նկարնե-  
րով զարդարուն գիրքը ապագրուած Պոլսում  
1913 թ. բոլորն էլ վճատեցան արտիւններն եւ քա-  
ղոկներն են, որոնց մեծ մասը 1000 օրինակ քոչ-  
նուած իրեն քարեկամին մօտը սարածելու եւ  
վաճառելու, մեծ պատերազմի օրերին այրուած  
են որպէս յեղափոխական գրուածներ: Զինա-  
դարից յետոյ Տիգրանն անցնում է Ե. Պոլիս  
էր լինելու իրեն գրչի աշխատանքին: Եւ զըլ-  
խիկար կրկին վերադառնում է Ռաւաթ: Ռաւա-  
թում իրեն ունեցած կեանքն եւ գործը փայ-  
լուն է եւ անմտաւանալի բոլոր ժողովուրդի կող-  
մից: Վերեք մի գրառատա հայր էր աղջակներին  
համար առանց ազգի եւ դատանակէի խտու-  
րեան: Եւ իրեն մասուցած ծառայութիւնը  
քարոզական եւ նկարական գոհողութիւնները  
1918 թ. Քաղաքի սարափի օրերին Պարսկաս-  
տան ապառիւնած գաղթականներին անմտա-  
ւանալի: Իրեն դեղարանը բաց էր ցերեկ գիշեր  
կարօտեալներու առջեւ, ճիւղարք մասակա-  
րարելով ամէն տեսակի դեղորայք, ինչպէս եւ  
մի քանի դեղագործ գաղթական երիտասարդ-  
ների համար որոնք կ'աշխատէին լաւ եւ քա-  
ւարար ռոնիկով: Իրեն բնակարանն ուր միակն  
էր ամէն յարմարութիւններով, շարունակ լի-  
ցուն էին նստաւոր ազգայիներով: Ինքն էլ

նկով գեղարուեստաւէր և գրական մտք շարունակ պատրաստ էր իրեն կարելին անել յօգուտ դպրոցի, բարձրնի և այլ բարեկեցութեան ձեռնարկների և որոնց քօլորին մէջ ունէր ազնիւ մասնակցութիւն: Ռաւաթի ժողովուրդը գոհ էր ևս երջանիկ որ ունէր այսպիսի մի գործիչ, Քայջ... Տիգրան Անէմեանը կ'ուզէր բողոքել Ռաւաթ, գնալ իրեն հայրենիք: Երկար աշխատեցաւ մինչ կարողացաւ յաջողցնել իր այս նպատակը 1926 թ. «Արջնակախմառէ գր-նում եմ ապրելու և ի հարկ է յեայն հասել մեռնելու Ռուդարիայում»: Եւ այսպէս էլ ե-րդաւ: Հապրեց, անցած ապրիլի վերջերն է ինչ ստացայ մի ծրար: Սեւ էր այս ծրար որք բա-ւական ցնցեց զիս: Ես ևս երբ բացի ևս կարդա-ցի, ստրառալը պատեց զիս: Անէմեանի բարե-կամ դակ: Փափագեանն էր ուզարելի սեւ ձը-րարը: Վէտաթի մահազգն էր 1927 ապրիլ 17ին: Ռապէս մի նմոյշ իր անձնուէր գործունէութիւ-նից բերեմ միայն մէկ օրինակ: 1918 թ. աշնան ցարս օրերին էր երբ հանգուցեայ Ռաւաթովցի նամակ ստացանք, որով կը հրաւիրէր Ռաւաթի գաղթականական կոմիտէից 2րդ ներկայանամ կնգելի (այժմ Փակելի) խորհրդակցութեան համար: Այս պատուով յանձնուեց ինձ ևս Տիգրանին: Հասանք կնգելի, սաստիկ ցուրտ էր: Ռոյտը Հայերին սնիր լեցուն էին գաղ-

թականներով: Հիւրանոցները շատ սուղ էին այդ օրերին: Միևնակ արտօնում էինք իջնել իւ-րանոց: Քայջ... Տիգրանը մի քանի քաղէ մա-ծելուց յետոյ դարձաւ ևս աւագ: «Տէր հայր ժա-մի բանալին մօտայ է»: — Այո: Մեզ կը մնանք հենց ժամաւոր: Մեզ է որ այսօր սուղ իւ-րանոց գնանք այնպէս համարքիք որ ուխտ ենք կելլը: Եւ այսպէս էլ արացինք: Յերեկները կ'աչցելէինք գաղթականական կայաններն մասնակցելով ձօնովներին իսկ գիւրերն կը մտնէինք կիկոցեցին մեզի վրայ դիզելով ժամա-շապիկ և շուրջա՛ն ցրտից պատապանելու ևս կողէկները անհետելու յօգուտ գաղթական-ներին: Այսպէս էր ևս ամեն ազգ. գործի մէջ. խնայողութիւն: Մեաւս Վէտան Տիգրանը բայց, կ'ապրին իրեն գրածները և իրեն յար-գանքը միտա վառ կը մնայ իրեն հանաչողնե-րին օրտաւմն ընդհանրապէս իսկ մաւտեցի-ներին մասնատուրապէս: Ես ևս որպէս մէկն ի-րեն շատ մօտիկներից ևս գաղթականական ևս ազգ. գործակիցներից միտ յիտի յիտն իրեն տղերք:

«Ար պիտեմ ծովը ցատկոտ ու յամառ, որ ժայթկէ խոխոս քրքուր յասակին:

Եւ լոյժ կ'աքիլներ որ ժայտեր բակն, յարաւսն անդու կ'ուռելուն համար»:


Մարդիկ կը մեռնին սակայն իրենց գոր-ծերը կը մնան: Հանգիստ էեզի Վէտաթի:

ՅՈՒՆ. ՔԷՆ. ՌԱՐՍՅԱՆՍԱՆ

ԾԱՂԿԱՄՇԱԿՈՒԹԻՒՆ

### ԳՈՐԳԻՆԱՅ

(Dahlia,\*) Նուրբզ Կիւսի



Երանի անոնց, որոնք ծաղիկներ կր սիրեն, բայց բիւր երանի անոնց, որոնք միայն ծաղիկներ կր սիրեն:

#### ԱԼՅՈՍ ՔԱՐ

Ահա եւ մին ծաղիկներու աշխարհին գեղեցկագոյն ներկայացուցիչներէն, որ, եր բազմաթիւ առաւելութիւններով, ու աւելի քան դիւրին մշակութիւնով, կոչուած է մեր պարտէզներուն մէջ մեծ տեղ մը գրաւել: Գոյներու ու ձևերու հարուստ պէտքերով, երկար ցօղուններով վրայ՝ յունիսէն մինչեւ հոկտ. վերջ, անգագար ու առատօրէն ծաղկող իր խոշոր ու փայլուն ծաղիկներով, Գորգինան եթէ ունենար նաեւ բոյր,

(\*) Տասնեութերորդ դարուն վերջերը (1791) վիսանթէ Սերփանթէզ Մեկսիկայէն Սպանիա, Մատրիտի բուսաբանական պարտէզին անօրէն՝ Գալանիյ Աբբային զրկած է այս բոյսը:

Աբբան՝ իր կարգին, զայն նուիրեց Շուտացի բուսաբան բոֆէսէօս Անտոնիո Տանի, և այսպէս այս ծաղիկը բոֆէսէօսին անունը առնելով կոչուեցաւ Տանիա:

ապահովաբար պիտի կարենար իլել վարդէն՝ անոր թագուհիի տիրոջը:

Թէեւ կարելի է— եւ կ'արժէ ալ— շատ խօսիլ ու գրել այս վայելչագեղ ծաղկի մասին, բայց մենք՝ նկատողութեան առնելով մեր Տարեցոյցին սուղ էջերը, պիտի բաւականանանք ըսելով միայն ինչ որ պէտք է դայն պատշաճ կերպով մշակելու ու ծաղկեցնելու համար:

Ինչպէս ամէն ծաղիկ, գորգինանն էլ կարելի է հունտերու մշակութեամբ ձեռք բերել, բայց մշակութեան այս ձեւը՝ յաճախ յուսախաբութիւններ պատճառելուն համար, շատ յանձնարարելի է. շատ գեղեցիկ գորգինայի մը հունտը գրեթէ միշտ միջակ, միջակէն իսկ վար արդիւնք մը կրնայ տալ. եւ արդէն, սեւէ հունտ չի տար նմանը այս ծաղկին ուրկից իսկ յառաջ եկած է, եւ ահա ա՛յս պատճառաւ է որ յաճախ զայն «փոփոխական գորգինայ կ'անուանեն շատեր (Dahlia variabilis): Հունտեր կը մշակեն գրեթէ միայն վարպետները, հարկը բաւարարելու մէջէն՝ 4—5 գեղեցիկ նորութիւններ ձեռք բերելու յոյսով մէկ մըն ալ անոնք՝ որոնք նուազագոյն ծախքով մը, ընդարձակ տեղեր գորգինայով լիցնել կ'ուզեն, այնպիսիները անշուշտ դժուարահաս չեն կրնար ըլլալ. մանաւանդ եթէ բազմաթերթ ծաղիկներ կ'ակնկալեն:

Սկսնակ ամութեօսին համար — ինչպէս շատ շատերու համար— գեղեցկագոյն ծաղիկներ ձեռք

գերելու յարմարագոյն միջոցը՝ ճշմարիտ վարպետներուն ստեղծած գորգինաներուն ուռերը (tubercule) միայն մեակելի է։ Այս ուռերը, որոնց ընդհանրապէս փոքրերը յանձնարարելի են—ոչ շատ աւելի մեծ քան ընկոյզ մը—պէտք է իրենց վրայ ունենան՝ իրենց նախորդ տարուան հասկէն գէր պզտիկ կտոր մը, որովհետեւ ապաստած բոյսին բողբոջը՝ ոչ թէ այլ ուռէն, այլ, ասոր ու հասկին միացած սեղէն է որ կը ծլի։

Ձեր նախասիրած գոյներուն ու տեսակներուն ուռերը շատ վտտահելի տեղէ մը հայթայթելէ յետոյ, Մարտի վերջերը, կամ Ապրիլի առաջին օրերը, երբ օդերը սկսած են տաքնալ, դայնս՝ իրարմէ 5 սանթիմէթրի չափ հեռաւորութեամբ — հասկին կտորը վեր — կը տնկէք, լաւ աղբուած կակուղ հողի մը մէջ, եւ նոյն հողով՝ քերն կերպով մը միայն կը ծածկէք վրան։

Իրաւ է թէ գորգինան եւս հողի մասին շատ դժուարահաս չէ, բայց կակուղ, նախապէս լաւ աղբուած աւազային հող մը միշտ կը նպատէ անոր շուտ ու լաւ դարգացման։ Ձեր ուռերը այս կերպով տնկելէ յետոյ, թիթեակի կը ջրէք եւ կը քանաք, յաջորդ օրերուն հողը միշտ խոնաւ պահել։ Բայց ոչ թաց ու ցիլո՛ւ երկու շաբաթէն՝ ծիւրը կ'երեւի, նոյնքան ատեն եւս, — մանաւանդ եթէ օդերը նպաստաւոր են—եւ ահա բողբոջները 8—10 սանթիմէթր բարձրութեան մը հասած կ'ըլլան. այն

ատեն, իւրաքանչիւրը իրարմէ մէկ մէկ մէթր հեռաւորութեամբ, վերջնական կերպով կը տնկէք իրենց յատկացուած տեղերը։ Տուռներուն շուրջը թիթեակ խորութիւն մը պէտք է, որպէսզի ջրուած ատեն՝ ջուրը աղէկ ծառայէ իր նպատակին։ Արեւ եւ ջուր բացարձակապէս անհրաժեշտ են այս բոյսին զարգացման եւ մանաւանդ ամրան սաստիկ տաքերուն՝ բոյսը՝ երբ մտալ վերէն վար ջրելը շատ օգտակար է (տեսակ մը արուեստական անձրեւ)։

Հողը ո՛րքան շատ աղբուի — առանց չափազանցութեան բնականաբար—ծաղիկները ա՛յնքան առատ եւ խոշոր կ'ըլլան. իսկ եթէ ուզուի արտասովոր մեծութեամբ ծաղիկներ, (թէեւ սակաւաթիւ) պէտք է իւրաքանչիւր ձիւղի ծալքը միայն մէկ կտկոն թողուլ եւ միւսները կտրել, անմիջապէս որ բռնելու կամ կտրելու աստիճանին հասած են։

Եղանակի ընթացքին՝ տունկը մեծապէս կ'աճի կ'ուռածանայ եւ ծառատունկի մը վիճակը կ'առնու, եւ որովհետեւ անոր ձիւղերը շատ դելւաբեկ են, անհրաժեշտ է իւրաքանչիւր տունկի քով, գէթ մէկուկէս մէթր բարձրութեամբ, հաստաւն պաշտպան զաւազակներ դնել, ու խնամքով կապել, հովերու աւերներուն դժամ պաշտպանելու համար մեր պարտէզներուն այս թանկագին հիւրերը։ Այս մասին զանցառութիւն մը շատ ցաւալի կ'ըլլայ որովհետեւ, կրնայ ըլլալ որ, իրիկուն մը կամ առ-

տու մը՝ մեր ա՛յնքան խնամքով ու հոգածու-  
թեամբ յառաջ բերած այս գեղեցիկ տունկերը՝  
կտրած թափած, թշուառ վիճակի մը մէջ, գետինը  
փռուած տեսնենք:

Նոյեմբերի վերջերը, երբ տերեւները թա-  
փած են արդէն, եւ բունն ալ կիսով չափ չորցած,  
հողէն կէս մեթրի չափ վերէն կտրեցէք զայն, ու  
մեծ խնամքով եւ զգուշութեամբ արմատը հողէն  
հանեցէք, ջանալով ցրբէք չը վերաւորել զայն  
բահ ու բրիչի տկամայ հարուածներով պիտի տես-  
նէք թէ դարնան ձեր տնկած փոքրիկ ուսը՝ մեծ  
ու սլաքիկ ուռերու ողկոյլ մը կազմած է: Իր վի-  
ճակին մէջ, առանց բնաւ ուռերը փրցնելու, ո-  
րովհետեւ, կը կրկնենք, պէտք չէ բնաւ մտնալ  
քէ՛ ծիլերը կը բողբոջին միայն եւ միայն ու-  
ռին ու հասկին իրարու միացած սեպէն. եւ քէ  
ոնէ՛ ուռ՝ ինճին չուցի բնաւ բողբոջման կա-  
րողութիւն) ձմրան եղանակին կը սլահէք զայնս  
ա՛յնպիսի տեղ մը, ուր ազահով էք թէ՛ չի պիտի  
սառնին անոնք: Առ այս զգալի ջերմութեան մ՛ալ  
պէտք չկայ սակայն:

Յտուաջիկայ դարնան դարձեալ հողը կը դը-  
նէք այս ողկոյցները, իրենց ամբողջութեամբ,  
ճիշտ այնպէս, ինչպէս ըրած էիք, ձեր առաջին  
սլաքիկ ուռերը, Այս անգամ բազմաթիւ բողբոջ-  
ներ պիտի ունենաք. երբ անոնք հասնին 8—10  
սանթիմ բարձրութեան մը, կը զատէք զանոնք,

ձեռքով կամ դանակով՝ բայց ա՛յնպիսի ձեռով մը  
որ իւրաքանչիւր բողբոջի մէկ ուռ արմատ մնայ,  
այս բաժանումը մեծ զգուշութեամբ պէտք է ը-  
նել, որպէսզի բողբոջները առանց ուռ արմատի չի  
մնան Այս կերպով նախորդ տարուան մէկ բոյսը՝  
4—5 անգամ, երբեմն աւելի իսկ, բազմացուցած  
պիտի ըլլաք. եւ այսպէս յաջորդաբար ամէն տարի:  
Իրաւ է թէ Գորգինայի տունկերը բազմա-  
ցնելու իրապէս յանձնարարելի միջոցը՝ բողբոջնե-  
րուն չաչի (չէլիկ) ձեռով մշակութիւնն է, բայց,  
որովհետեւ ան՝ սկսնակին համար, կարգ մը դժ-  
ուարութիւններ ունի, մինք՝ անոնց առաջին քայ-  
լերը առաջնորդելու նպատակաւ, առայժմ, ուռերու  
բաժանումով եղած մշակման այս ձեւը կը յանձ-  
նարարենք, իբր շատ սլարդ ու դիւրին երբ ամա-  
թէտը՝ քանի մը տարբեր ընթացքին բաւական  
փորձառութիւն ձեռք բերէ, կրնայ փորձել նաեւ  
չաչերու մշակութիւնը:

\* \*

Գորգինան 8—10 ձեւեր եւ իւրաքանչիւր  
ձեւ՝ գոյներու անհուն պէսպիսութիւն մը ունի:  
Ամէնէն շատ մշակուածները cactusները եւ dēco-  
ratifներն են, որոնց մէջ կան 20 սանթիմէթր, նոյն  
իսկ աւելի տրամագիծ ունեցող ծաղիկներ: Առա-  
ջիններուն թերթերը թելերու կը նմանին, երբեմն  
ճառագայթաձեւ, իսկ վերջինները՝ առհասարակ,  
լայն թերթեր ունին, ծայրերը թեթեւ իմս ուրուռն,  
երբեմն դէպի ներս, երբեմն դէպի դուրս դար-

Ճած, թէ ա՛յս եւ թէ միւս ձեւերուն մէջ, կան բարձրահասակ, միջահասակ ու գաճաճ բոյսեր, կան բամաթերթեր ու միապսակներ, շատ խոշոր, միջակ, ինչպէս նաեւ շատ փոքր ծաղիկներ արտադրողներ, վերջապէս գորգինան իր բազմաթիւ ու բազմազան ձեւերով չափերով ու գոյներով խկապէս բազմաճաճում ընտանիք մը կը կազմէ. եւ որովհետեւ ճաշակները ու գոյները անվիճելի են, ամաթէօսին կը մտայ այս ամէնուն մէջէն, ընել իր ընտրութիւնը. իր նախասիրութեանց համաձայն, առաջնորդուելով բնականաբար ծաղկեմշակական մեծամեծ հաստատութեանց գորգինաներու տեսակներուն յատուկ ցուցակներէն, ուր այս ծաղիկները՝ իրենց բոլոր մանրամասնութիւններով՝ ներկայացուած են:

Վերջացնելէ առաջ, ըսենք թէ բոլոր ի պատելի եղող ծաղկանց ընտանեաց իւրաքանչիւր անդամին, դանոնք իրարմէ՛ դանաղանելու նպատակաւ, անուն մը տրուած է. նոյնն է նաեւ գորգինաներուն համար: Այս անունները, կամ անոնց տեղ թիւեր կրող պիտակներ կցուած են ուռերուն. արդ, իր պարտեզին կարգուսարքին խկապէս հոգածու ամաթէօսը պէտք չէ բնաւ կորսնցնէ այդ պիտակները, որոնք ամառը՝ բոյսին ձմեռն ալ ուռերուն կապուած պէտք է մնան: Ամէն ծնողք դիտեն իրենց զաւակաց անունները եւ ծաղիկները՝ դայն մշակողներուն սիրելի եւ դեղեցիկ զաւակները չե՞ն միթէ:

**ԶԱՐԵՂ ԲԱՍՏԱՆ**

**ՍՐԲՈՒՄԹ ԴԼՄՔԲԸ**

**ՀԱԿԻՐՃ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ**

Տարեցոյցիս ամէնէն աւելի փոփոխյաձ մէկ ճիւղն է ներկայացնել ընթերցողին՝ Հայութեան օգտակար անդամներ կարելուր ծանօթութիւններով իրր օրինակ շատերու և իրր զրգիւն մը հետեւեցողութեան:



Ահա այդպիսինքն մին է ԱՐՏԱՇԵՍ ՎԱՐՊԱՆԵԱՆ, բնիկ Ակիւտարցի, ծնած 1878ին, զաւակ բարի ծնողաց, իր աշակերտ Սեւազ վարժարանի: Ուսուցիչներն եղած են Տ. Հմայեակ Էնքսէրճեան, Տ. Տանատ Փաշայեան աւագ բահաններ, Ս. Կարսպետ եկեղեցւոյ բարոյգիչ Տ. Ներսէսէ: Դանիէլեան և այս տղերքը զորոզը՝ 22 տարեկանին կուսակրօն բահանայ ըլլալու համար կ'ուզէ Արմաշու Դպրե-

Արտաշ Կարդանեան

վանքը մանեկ բայց մայրը արգելք կ'ըլլայ. նոյնպէս կ'որոշէ Վենետիկ երթալ, դարձեալ մայրական սէրը հնանդութեբ այս բաժանումին: Վերջապէս կը մեկնի Ամերիկա 1912ին՝ ուր գործարաններու անհանդուրժելի կեանքը կ'ապրի օտարուած, բայց պարապ չիմնար, կ'աշխատի, կ'աշխատի և իր ննարիմաց հան-

ճարով լուս պարագու մներու կը յանձնուի և կը յաջողի գիւտեր ընել: Որոնցմէ ժիոյն համար Ամերիկեան կառավարութենէն մենաշնորհ կ'ստանայ:

Անցեալ տարի Պոլսոյ հայ մամուլը աւետեց իր այս գիւտը, ինչ որ մեծ գոհունակութիւն և պարծանք եղած է Ամերիկահայութեան, այնպէս որ իր գտնուած բաղաքի Փորթլէնտի Հայութիւնը և ամերիկեան քաղաքացիներ, զպրոցի պաշտօնեաներէն սկսած մինչև յետին գործաւորը մեծ խանդով շնորհաւորած են յիշեալին յաջողութիւնը և անոր փառաւոր անունին շուրջ հետաքրքրութիւն արծարծած են տեղական թերթեր:

«Փորթլէնկ Իվնինկ Էքսքրէս» թերթը (26 Ապրիլ 1928) կը հրատարակէ Վարդանեանի նկարը և մանրամասնութիւններ անոր ըրած գիւտին. «Ոա հնարած է գործիք մը, որ ինքնաշարժօրէն կը վառէ կազի ջեռուցիչներ: Այս հնարքը վերջերս մենաշնորհուած է և արդէն կը խոստանայ շահաբեր գործ մը ըլլալ օտար շուկաներու վրայ:

«Պ. Վարդանեան տակէ զատ ըրած է բազմաթիւ հնարքներ: Սակայն Ուաշինկթընի մենաշնորհի տենեակը իրեն հաղորդած է թէ այս կարգի հնարքներ արդէն մենաշնորհուած են ուրիշներու: Հակառակ այս ձախտուածքին, Պ. Վարդանեան շարունակած է իր աշխատանքները: հնարքի կալուածին մէջը:

Անոր այս փառքին համար և ես իր իրեն յոյժ համակիր մեկը սրտանց կը հրճուիմ և կը մաղթեմ իրեն շատ երկար փարիներ, որպէսզի նորանոր գիւտերով պանծացնէ զինքը և իրենները:

Ահա մեր հրապարակին անծանօթ յարգելի ղէմք մըն ալ:

ԿԱՐԱՊԵՏ ՓԱՓԱՐԵԱՆ, հիմնադիր Պարսկաստանի ղեղազորական վարժարանին և դասախօս նոյն վարժարանի ղեղազորական ճիւղին, մնած 1869 Նոյ. 10ին Պոլսոյ Եէնի-գարուի թաղը, ուր ստացած է նախնական կրթութիւն, ապա աշակերտած է Մայր վարժարան մեր պաշտօնավարութեան տարիներուն և շրջանաւարտ ըլլալու մօտ ուսումը կիսատ թողլով ղեղարան մտած է: 1894ին ղեղազորական վկայական ստացած է: 1896ին Թէհրան հրաւիրուած է ղեղարան բանալու: Բաւական օրէն



Վարապետ Փափարեան նըսգէտ ըլլալով երկար ատեն Թէհրանի թուրք դեսպանատան ղատարանի մէջ պաշտօն վարած է և լաւ գնահատուած է. նոյնպէս մասնակցած է Թէհրանի ազգ. ժողովներուն, հրատարակած է Պարսկ. հեղինակութիւններ: «Ակոսների առողջապահութիւն», «Լուսանկարչութիւն» և «Ընդարձակ առողջարանութիւն» նաև նոյն լեզուով անտիպ կը մնան ղեղարանական և պարսկերէն ու հայերէն ստուգաբանական գործեր: Ունի նաև մասնագիտական գիւտեր:

Իսկ նշանաւոր է իր երկրին մատուցած այն ծառայութիւնը, որով յաջողեցաւ ղեղարանները բարե-

կարգել և 1922ին առաջին անգամ ըլլալով ղեկազոր-  
 ճական վարժարան հիմնելու պատճառ դարձաւ և ի պա-  
 տիւ Գ. Փանիրեանի՝ անոր տրուեցաւ վարժարանի  
 բացման ծանն և առաջին դասախօսութիւնը և ծափե-  
 րով փառաբորուեցաւ լուսաւորութեան նախարարի և  
 հոծ բազմութեան առջև:

Գ. Փափարեան հռչակաւոր է լրագրիներու մէջ  
 հրատարակած առողջապահական յօդուածներով, մա-  
 նաւանդ տարախօսիկ հիւանդութիւններու ստեն օգ-  
 տակար եղած իր հրատանգիչ գրուածքներով:

Ան այս բոլոր ծառայութիւններու փոխան  
 պարսիկ կոնսուլարութիւնը վարձատրած է զանի գի-  
 տութեան առաջին կարգի ոսկի, ինչպէս նաև Շիր-Խօր-  
 շիտի չորբորդ և երրորդ պատուանշաններով:

Բարեբախտ յայտնութիւն մը եղաւ Պոլսոյ հրա-  
 պարակին վրայ Պ. Ա.Ի.ՆՏԻՍ Ժ.Ա.Մ.ԿՈՉԵԱՆ իբր բարե-  
 սէր անձնաւորութիւն և ընդհանուր սիրելութեան ար-  
 ժանացաւ իր միջոցաւ Ազգ. Հիւանդանոցի ընձայուած  
 3216 տոլար 77 սէնդ նուիրատուութեան համար: Թէև  
 իր անձնականէն չէր այդ գումար, այլ տարիներ ա-  
 ռաջ բարենպաստակ ընկերութեան մը պահեստի մնացած  
 250 սիէրլիների գումարն էր, զոր Պ. Ա. Ժամկոչեան  
 շահնցուցած էր ուղղամտօրէն և հասուցած այդ գու-  
 մարին և անցեալ տարւոյ սկիզբը յանձնած է Պորտի  
 միջոցաւ Հիւանդանոցի Հոգաբարձութեան:

Ի նշան երախտագիտութեան Հոգաբարձութիւնը  
 Ռենճեան հիւանդասրահին մէջ 2 մահին յատկացուցած

է յիշեալին անուան: Պ. Աւետիս Ժամկոչեան բնիկ  
 Ակնցի 30 տարեկան հասակին ինչ ինչ պատճառներով  
 կը գաղթէ Անգղիա, Մանչեսթըր, ուր առևտրական  
 յաջողութիւններ կ'ունենայ. Երկար տարիներ կը վարէ  
 Մանչեսթրի հայ գաղութին ընդհանուր ժողովոյ և  
 Կիպրոսի Ռըբանոցին խնամակալութեան ատենապետի  
 պաշտօնը: 1911ին առողջական պատճառներով կը մեկնի  
 Ամերիկա և կը նաստատուի Բալիֆոռնիոյ Լօս Անճէլըս  
 քաղաքը, ուր կը հիմնէ California soap Co. իր  
 սեպհական գործը: Պ. Ժամկոչեան իր հազուագիւտ  
 ձիրքերով պատուական հայր մըն է և միշտ սիրելի ե-  
 զա՛ծ է տեղւոյն հայ գաղութին:

Բալիֆոռնիայի հայ եկեղեցին իր արժանաւոր  
 պաշտօնեաներն ունի ներկայիս զլիաւորութեամբ Ա-  
 ռաշտոյդ Գարեգին Եպսկ. Խաչատուրեանի, Այս հայա-  
 շատ վիճակին մէջ պաշտօն կը վարեն Արմաշական Տի-  
 բայր Ծ.Վ. Մարգարեան, Վարդան Ծ Վ. Գասպարեան,  
 Խաչատուր Բնյ. Գուրգեն, Ատոմ Բնյ. Մելիքեան,  
 Էն.: Աւելորդ է ներկայացնել Գարեգին Արբազանը,  
 որուն մանրամասն կենսագրութիւնը կանուխէն հրա-  
 տարակեց ժամանակ թերթը, նոյնպէս ծանօթ են Տի-  
 բայր և Վարդան Ծ. վարդապետներ իրենց սրբաուն  
 կեանքով և անաղարտ պաշտօնավարութեամբ, նաև  
 Խաչիկ Բնյ. իբր զրչի մարդ ունեցած է հրապարակա-  
 յին լաւ գործունէութիւն: Ուստի կը բաւականանամ  
 անոնցմէ միայն Տէր Ատոմ քահանայի հակիրճ կեն-  
 սագրականը ներկայացնել հոս:



ՏէՐ ԱՏՈՄ ՔԼԵՅ. աշխարհական անունով Պօղոս Մինրան Մելիքեան ծնած Մաղնիսա 1876 Մարիս 25ին:

Նախնական կրթութիւնն առած է Իզմիրի Ս. Մերոպեան վարժարանը: 1891—97 Ֆնացած է Երուսաղէմ նախ իբր աշակերտ և յետոյ իբր ուսուցիչ Ժառանգաւորացին ու զպրապետ Ս. Յակոբայ վանքին: Ամուսնացած է 1898ին: Երուսաղէմէն Իզմիր վերադառնալէ ետքը 1897—12 պաշտօն վարած է Իզմիրի քարափի բնկերութեան մէջ:



Ասոմ Քինյ.

1912ին Ամերիկա եկած և հաստատուած է Ֆրէզնօ, ուր հայ եկեղեցւոյ զպրապետութեան պաշտօն վարած է մինչև 1917 ին օծտուած ըլլալով առատ, ուժեղ և ախորժալուր ձայնով: Դպրութեան աստիճաններ ստացած է Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսէն, ուրարահրութեան արտօնութիւն՝ Դուրեան Պատրիարքէ, իսկ բանանայութեան ձեռնադրութիւն ընդունած է 1917 Մարտ 17ին Բարզէն Սրբազանէն, Լօս Անճէլոսի թեմին վրայ: Իբր կարող եկեղեցական պատուուած է զունաւոր ծաղկեայ փիլոնով Ամերիկայի առաջնորդ Տիրայր Արքեպիսկ. է, իսկ լանջախաչ կրելու իրաւունք ամենայն Հայոց Վեհ. Հայրապետէն, արժաթեայ լանջախաչ ստացած է Ամերիկեան Կաթողիկ եկեղեցւոյ ներկայա-

ցուցէն: Գիտէ բացի իր մայրենի լեզուէն Ռուսարէն, ֆրանսերէն, քուրքերէն և անգղիերէն:

Իր բարի և սիրաշահող նկարագրով՝ մեծարուած է Տէր Ատոմ՝ իբր զբասէր անձ թղթակցած է հայ թերթերու զպիւր ծածկանունով: Աշխարհարարի վերածած է հայ եկեղեցւոյ Պատարագամատոյցը:

Իր անդուլ զանքերով յաջողած է զբամ հանգանակել և կանգնել Լօս Անճէլոսի Ս. Խայ եկեղեցին:

Աստուած պահէ հայ եկեղեցւոյ այսպիսի ժիր մշակներ:

Ս. Գ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՆՊԱՍՏԱՌՈՐ ՁԵՌՆԱՐԿ

Այս ատեն ձեռնարկին յղացողն է Պ. ՊՕՂՈՍ ԱԼ ՊՕՅԱՃԵԱՆ, ապահովագրիչ եւ որ այս յղացումով էայրայրիչ կ'առաջարկէ ըլլալ Բում. երկարուղիի, Սգիպս. Քուէթի ԸՅԵՍԻԷ, Ըրանս. Քաէթի ԸՅԵՍԻԷ, Վիլ քր Բարիներ, Քաէթի ցաթիօնայ, Կարմիր խաչ եւն. պարտաւարքերու: Նոյնպէս օգտնուային վիճակահանութեան օտմերու: Հարստեկեան, մկրտութեան եւ Նոր Տարւոյ առիթ. իբր նուէր գերադաս եւ այս պարտաւարքեր, միանգամայն ամէն քահկի յարմար:

Հասցէ՝ Պ. Ալպոյանեան, Կ. Պոլիս, Զարմարեղար Թակորեան խան թիւ 11, Հեռ. 396

ԵՍՐԱՅԷԼ Խ. ԱՅՍԻԱՆ. ծնած Մուսնուսուն(\*) 1875ին, իրր Գէորգ Էսանան սան, 1889ին ընդունւած Ս. Կարապետի վանքի բարձր. վարժարանը, եւ վեց Գէորգ Էսանան սանիբու հետ՝ 1894ին շրջանաւարտած:



Խորայել Խ. Այսյան

Ըստ պայմանագրի ընդգրկուելով ուսուցչական շտապարեզը, հինգ տարի շարունակ, իրր զատասխան եւ Տնօրէն Կեսարիոյ Հայկեան վարժարանը պաշտօնավարել վերջ, Օրտուի, Կիրասանի եւ Մէրզիֆունի ազգ. վարժարաններու Տնօրէնութիւնը վարեց ձեռնհասօրէն, արժեցնելով հմտութիւնը եւ փորձառութիւնը:

Ուսուցչ. ասպարէզի մէջ խնայած լուսանկրով, Մէրզուֆունի գոյէճէն շրջանաւարտ. եւ Ս. Կարապետի վարժարանի Անգլ.ի ուսուցիչ. իր երէց եղբայրը՝ Յովնանէսը, զրկեց Պէյրուսի Ամերիկեան բժշկական համալսարանը:

Յովնանէս, Հիպոկրատի աշակերտ դարձած, եկաւ Կեսարիա եւ Թալաս Ամերիկեան հիւանդա-

(\*) Կեսարիոյ երեսօտային կողմը՝ Յ ժամ եւ Ս. Կարապետի վանքի Արեւմտեան երեսօտային Յ ժամ հեռաւարտութեամբ, բյրակի մը կուշար, սորեղէմ, եւ այգեւէտ գիւղ մը:

նոցի մէջ՝ տարթորներ Տասի, եւ Փոսթի ձեռքերուն տակ. պաշտօնավարեց, իր կարգին՝ Խորայելը ու զարկելով Փարիզ՝ բազմաբուհեան վարժարան (Ecole Polytechnique), եւ անոր փոքրը՝ Չարէնսը (Քերուարտ. Ս. Կարապետէն) Պրուսայի շերամարուծարանը:

Խորայել, ինչ ժամանակուան մէջ, Է՛՛՛՛՛՛ Փոլիէնիֆի փայլուն մէկ վկայականով, եւ յիսուն անգլ. ոսկի ամսաթուղակով կը մեկնէր Պրագիւլիա, ամենափոքր եղբայրը Արշակը. Պոլսոյ Ատաֆնարուժական, եւ քրոջ որդին՝ Չարէնոս Այվատեանը ղնելով՝ Ս. Կարապետի բարձր. վարժարանը՝ վճարովի:

Իրերօգնութեան այս զարմանալի օգակաւորումով՝ չորս եղբայրներ ազատ. եւ բեռորդինին Չարէնոս ուսուցչական ասպարէզը կ'ընդգրկեն, զրաւելով փայլուն դիրքեր:

Ո՞ր մէկ զրիչ. կամ վրձին կրնայ նկարել եղբայրսիրութեան այս այնքան գեղեցիկ պատկերը, որ արդարեւ հրաշքներ գործած է:

Խորայել, ազնիւ քնտանիքի մը հօր, Խորշահի զաւակն է: Մա, զուարթասոհ, զուարճասու, թէ զիւղի, եւ թէ Կեսարիոյ շրջանակներու մէջ, որոշ տեղ մը զրաւած, ազգային գործերու միջամուխ եղած, եւ իր կարողութեան չափով օգտակար հանդիսացած է զիսդին:

Բաւական տարիներ Ս. Կարապետի վանքի եւ վարժարանի մատակարարական պաշտօնը վարած է ձեռնհասօրէն:

Այս չորս եղբայրներէն՝ շիրամարոյժ Զարէս-  
ար, եւ քեռորդինին՝ ուսուցիչ Զարէսը մեռած են  
միայն:

Առաջինին թողած երկու զաւակները, եւ կի-  
նը՝ Տիկին Աննիկ (Կեսարիոյ նշանաւոր Տ. Աշոտ  
երկաթ քահանայի աղջիկը) կը վայելեն Իսրայէլի  
գուրգուրատ հոգածութիւնը, իր յարկին տակ:

Տարթ. Յովհաննէս Բըլիֆի գործով Յունաստան  
կը գտնուի, եւ իրեն ապահոված է ո՛չ նուազ նիւ-  
թական փայլուն վիճակ մը:

Ատամնարոյժ Արշակ, Պրագիլիա եղբօրը բովն  
է, առանձին ընտանիք կուզմած, Իսրայէլ միայն ա-  
մուրի կը մնայ, ինրզինքը յանձնած հանգուցեալ  
եղբօրը զաւակներուն, կնոջ եւ Պուէնոս Այրէսի  
գաղթականաց հոգածութեան, ըլլալով ատենապետը  
այդ անուն յանձնատուներին:

Գիտուն միտք մը, զգայուն սիրտ մը, իր պա-  
րապոյ ժամերուն մէջ **I. Arslan** ստորագրութեամբ  
մասնագիտական յօդուածներ կը գրէ տեղական, եւ  
ուրիշ գաղիերէն թերթերու մէջ:

Այս տուրն նկարագրի, յարատեւ աշխատողի  
տիպար հայրդին, իր վրայ կը փայլեցնէ Կեսարա-  
ցիի խակական յատկութիւնները՝ պատիւ բերելով  
միանգամայն իր ուսած վարժարանին եւ ցեղին:

**ՄՍԵՆՆԱՆ ԱՍՏՏՈՒՐ**

### ՄԵՍՐՈՎԲ Յ. ՍԵՔԵԱՆՑ

Հնդկահայ գրական վաստակաւոր (1888—1928)

Քաղցրագոյն հաճոյքն է զրչիս նուիրել ներ-  
քողեան **Պ. Մեսրոպ Յ. Սեքեանցի**՝ անոր գրական  
գործունէութեան քառասնամեակի առթիւ, տալով  
անհրաժեշտ մանրամասնութիւն-  
ներ անոր արդիւնալից կեանքին:



**Պ. Մեսրոպ  
Յ. Սեքեանց**

**Պ. Մ. Յ. Սեքեանց** ծնած  
էր Զուլա 1871 Մարտ 15, ազ-  
նուական տոհմէ, նախնական  
կրթութիւնը կ'ստանայ Բողոք-  
Միսիոնարաց երկու դպրոցը,  
հմտանալով Պրակեբէնի եւս մին-  
չեւ 1888: 1890ին կը գաղթէ  
Կարկաթա, կը մտնէ Հայկ. Մար-  
դասիրական ձեմարանը եւ յա-  
ջորդ տարին Պետական Համալ-

սարան, անոր մուտքի քննութեանց առթիւ արժա-  
նանալով ոսկի միտալի:

1894էն մինչեւ ցարդ կը վարէ Պետ. Համալ-  
սարանի հայերէն լիզուի քննիչի պաշտօն, քսան-  
տարի Մարդասիրական ձեմարանի վարչութեան ան-  
դամ եւ հինգ տարի եւս հոգարարժու եւ գրաւած է  
իր ուշը այդ դուրուոր պատկառելի հաստատութիւնը,  
որ այդ հեռուստր գաղութին ազգային պարծանքն է:

**Պ. Սեքեանց** առաջին անգամ «Արեւելք» օրա-  
թերթի մէջ (1891) երեւցած է Հայք ի Հնդկաս-  
տան շահեկան յօդուածով եւ անկէ մինչեւ ցայսօր

շարունակած է մեր նախնեաց նուիրական լեզուով իր թանկագին աշխատակցութիւն, սփռելով հետաքրքրութիւն և անհետազոտութիւններ լրագրական էջերում, Պօլիս, Վենետիկ, Վիեննա, Մարսել, Քէհրան, Ամերիկա միեւնոյն ատեն սերտ կապ ստեղծած է արտասահմանի գրական հայ գէմերու հետ:

Իր պիտաւոր գործն է **History of the Armenians in India (1892)** որ բարձր գնահատուած է անգլ. մամուլէն. ասոր յաջորդած են ուրիշ շահեկան հրատարակութիւններ: Ինք որպէս դրամագետ անդամ ընդունուած է Կալիֆօրնի, Լոսանճի. Փայիփի **Asiatic society**ներէ եւ չորս տարի առաջ Հնդկ. կառավարութիւնը նշանակեց զանի, անդամ **The Indian Historical Records commission**ի: Յորեւինական յանձնախումբը կազմուած հնդկահայ նշանաւոր եւ ազդեցիկ ազգայիններէ նախագահութեամբ Հնդկահայոց ազգպետ գերամեծարն Պր. Յ. Կիսանէս Գալտանիանցի շքեղօրէն կրտսնէ այս գրական հանդէս (4 նոյ. 1928) իբրեւ պարծանք Հնդկահայոց, աշխարհի առջեւ հռչակելու այն մշտարտութիւնը թէ գրական փառքը անհամեմատ գերազանց է ամէն փառքիլէ:

Համբոյր այն ձեռքին, որ երկար տարիներ մեր ոսկեղինիկ լեզուի դրօշակը բարձրացուց Հիմալայա լեռներուն կատարը. ան խցից իր ականջները այս ծայրերուն դէմ արձակուած իրենի. «Ծալլէ՛՛ այդ դրօշակը եւ հնութեանց թանգարաններուն մէջ ի պահ դիր»:

Մինչ այս տողերը կը գրեմ, միտքս կը հիւսէ

ուսի անուրջներ կ'երեւակայեմ իզգ. դպրութեան նոր նոր յաղճանակներ Հնդկաստանի մէջ թէ պիտի վերածնին նոր Մետրոպոլիտներ: մայրենի լեզուն իբրեւ քնքրոշ մայր խաղճակաթ պիտի արժանանայ հայ գուակներու ուղիական գուրգուրանքին: Իսկ ինձ թող տրուի այս հակիրճ տողերը պիջջացնել արժանալարգ Յորեւիտին ընծայելով այս անկեղծ մաղթանքը մեր նախահարց լեզուով ըստ լղծից գերազընիւն Պ. Մ. Յ Ալթեանցի:

Պատկ կայեցի դասական մասնագրութեան լուսապայծառ շողայցէ ի նակաա Վեհից եւ յերկարեացին զամս յամայր աւուր կեանաց Բայ ի մշտանարոց բերկրանս, ըմպելով ամբիծ Երբամբ գնեկաւ անմահութեան:

Ս. Պ.

### Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Ի

Ս.

Նախ գտնել հետեւեալ բացատրութեանց համապատասխան բառերը:

1. Ինչ որ հարկ է ի մէջ բերել ի հաստատութիւն ըսածին:
2. Սփիւքսի պատգամաւորուհին, ըստ շնորհալի ատութեան Տիտր Ս. Գաբամանէանի նախորդ ճարեցոյցին մէջ:
3. Երկու երկուստանակ ժամի տեւողութիւն:
4. Ամբողջութեան մը մէկ հատուածը:
5. Սեւ ծովու եղերքներէն մէկուն մէջ բնակող ցեղ մը, որուն զուարճալի երգերը ու շաղաւ են. կամուրջին երլու կողմի նաւալարներուն մէջ

շատ ու շատ կը հանդիպինք այն ցեղին ներկայացուցիչներուն:

Ապա գտնուած հինգ բառերուն տառերով ճիշդ առ ճիշդ կազմել ելեք արական լամբարներու Կրէք գլխաւոր վաճառանիշներուն անունները:

**Բ.**

Ես կը բաղկանամ երեք մասերէ,  
Առաջին մասս՝ նահապետ արքայ,  
Որուն անունը ազգ մը կը կրէ:  
Իմ երկրորդ մասս խիստ յարմար կուգայ  
Իբրեւ պատասխան այն մաղթանքներուն՝  
Որ մեզ կ'ուղղուին բաժակ ի ձեռին:  
Գալով երրորդիս՝ մի՛ երթար հեռուն.  
Շատերը անկէ առին ու առին  
Եւ մոխիրներու վրայ բազմեցան.  
Իսկ իմ ամբողջս՝ աստղ մը լուսալի  
— Դեղեցիկ սեռէ, — բիւր ափսոս, բայց ան  
Ամիսը երկուք միայն կը փայլի:

**Տիկ. Ֆիմի Կ. Պէկեան**

**Պիտոյ.** Շատ գարմանալի է որ մեր նոր սերունդը բնաւ հետաքրքրուիր Տիկին Ֆիմի Կ. Պէկեանի եզակի սրամիտ հանեթուկներով: Այս տարի դժուարաւ կրցինք ստանալ իրմէ վարոյզեցանքերը, որովհետեւ իրաւամբ կ'աւազէ ընդհանուր մտայնութիւնը, տեսնելով թէ աննշմար կ'անցնի զբակնայն շատ յանկուցիչ ճիւղը եւ իբրեւ քաջալեր լուծողներու այժմէն կը խոստանայ Տարեցոյցիս հրատարակին հետ մէյմէկ զբաւրան նուէր տրամադրել անոնց:

**Անցեալ տարւոյ զոյգ հանելուկներուն լուծումները**

**Ա.**

1. **Մաւ** — Գալէնաէրեանի հեղինակութեամբ ժամանակին հրատարակուած կանանց յատուկ ձեւագիր-տութեան դասագիրք:

2. **Բեր** — Տասներկու ամիսներէն չորսին նոյնամանի կիրջաւորութիւնը, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր:

3. **Կեր:**

4. **Լուր** — Ֆրանսական առած մը կ'ըսէ. **Pas de nouvelles, bonnes nouvelles** այսինքն եթէ լուր չգայ՝ բարի է:

5. **Խար**

**Մաւ, բեր, կեր, լուր, խար** բառերը իրենց տառերով ճիշդ առ ճիշդ կը կազմեն հետեւեալ բանուկ առածը:

**Կեր, արք եւ ուրախ լեր**

**Բ.**

Առաջին վանկ **Ճի**, որ տարադարձութեամբ կ'ըլլայ **իճ**, անուն այդ զոյգակին, ուր էտմօն Տանթէս բանտարկուած է Մօնթէ Գրիսթօ վէպին մէջ:

Երկրորդ վանկ՝ **մի**, ժխտական մակբայ: Ամբողջութիւն՝ Ֆիմի:

Լուծեց **Պ. Օնցիկ Պ. Մանուկեան**, աշակերտ Սէն Պէնուա գօլէմին:

### ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՉԵՌՆԱՐԿ ՄԸ

#### ԻՔՐ ՆՊՈԱՍԻ ՄԻՋՈՑ

Տիար Լեւոն Շամտանձեան ի յիշատակ իր ողբացիալ հարազատին կ'առաջարկէ, որպէս զԵ Ազգ. Հիւանդանոցի կարօտեալներուն ի նպատակ մէջն տաղաւարներու մեռելոցի օրերուն՝ նոյն հաստատութեան մատրան մէջ յատուկ Ա. Պատարագ մատուցուի ներկայ գտնուողներու ննջեցելոց հօգևոյն համար եւ յիս պատարագի անոնց մասնակցութեամբ պատասխարեալներու հոգեհաց սարքուի, ներկաներու կամ անոնց փոխանորդեալներուն նուէրներն ընդունելով: Այս մասին Հիւանդանոցի հաստատութեան 96րդ տարեդարձին առթիւ (1828) գրաւոր առաջարկ մտուցուած է Տիար Շամտանձեանին կողմէ Ա. Պատրիարքին եւ պատուարժան Հոգաբարձութեան եւ որ նոյն հանդիսաւոր առթիւ գոհունակութեամբ կարգացուած է ընդունելութեան արժանացած է:

Բաց աստի Տիար Լ. Շամտանձեան կ'առաջարկէ որ Տաղաւարի մեռելոցներու օրերուն՝ իրենց սիրելիներու գերեզմանները օրհնող ազգայիններ մամեղէններ գնեն, նոյն օրերուն գերեզմանատան դռները պատրաստ տրամադրուած հանրութեան: Այս կերպով կարեւոր գումարներ կը նախատեսուին յօգուտ բարեսիրական հաստատութեանց:

### ՂԼԻԻ ԹԵՓԸ ԱՆՀԵՏԱՅՆՈՂ

#### Մ Ի Ա Կ Դ Ե Ղ Ը



### ԱՆՉՆԱԿԱՆ ՀԵՏԱՉՕՏՈՒԹԻՒՆ

Գլխի թեփը մի տեսակ մարթի հիւանդութիւն մը ըլլալէ զատ յաճախ կը պատահի օրածայր տառանքեր ունեցող սանտրերէն սրտնք գանկամերթը քերելով առաջ կը բերին այդ անիծեալ թեփը որ շատ անգամ անտանելի չափերու կը հասնի:

Ահա ատոց դարման կուտամ մի քանի դեղագիրներ, որոնք քեզուած են երկար պրպտումներով ու փորձերով, ամենքն ալ առանց բացառութեան լաւ արդիւնք տուած են, այսինքն թեփը յի քանի օրուան մէջ բոլորովին անհետացեր է:

Դեղագիր թիւ 1

Nitrate de Pillocarpine	0,05
Résorcine	2,50
Salol	2,50
Naphtol B.	3,00
Huile de Ricine	10,00
Teinture de Cantharide	10,00
Alcool 95°	100,00

Գեղադեր Թիւ 2

Chloral Hydraté	2,00
Ether Sulfurique	12,50
Chloroforme	15,00
Alcool 95°	50,00
Essence de Romarin	0,50

Այս երկու դեղերը պատրաստ ունենալէն յետոյ, առաջին երկու գեղերները պառկեցնէն առաջ մի փոքր բամբակի կտորով Թիւ մէկ դեղէն մազերու արմատներուն ոյժով քսելու է, իսկ երրորդ գեղերը նոյնպէս պառկեցնէն առաջ Թիւ երկու դեղէն միեւնոյն ձեւով գործածելու է, իսկ չորրորդ եւ հինգերորդ գեղերները դարձեալ մէկ Թիւ դեղէն պէտք է քսել, իսկ վեցերորդ գեղերը նորէն Թիւ երկու դեղէն պէտք է գործածել, այսինքն երկու գեղեր Թիւ մէկ դեղէն մէկ գեղեր Թիւ երկու դեղէն պէտք է գործածել եւ այսպէսով վեց օրուան մէջ երբեմն ալ աւելի շուտ գլխի Թեփը բուրսովին կ'անհետանայ:

### ՍԱԼԷՔ

ԴԱՐՁԵԱԼ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ

Սալէքը արեւելքի մի շատ երկիրներու յատուկ մասնաւորապէս Պագուստի, Հալէպի, Միջագետքի, Եփեսոսի, հիւսիսային Ափրիկէի եւ հա-

բաւային Պարսկաստանի (Թէհրանէն սկսած) մէջ տեսնուած մի պալար է որ առ հասարակ բժշկական աշխարհում (bouton d'Alep), (bouton d'orient) Հալէպի կամ արեւելեան խաղաւարդ անունով ծանօթ է եւ առհասարակ մէկ տարի կը տեւէ իսկ երբեմն ալ մէկ տարիէն մի քիչ աւելի եւ այդ պատճառաւ է որ Պարսիկները այդ պալարին «Սալէք» կ'անուանեն այսինքն մէկ տարեկան:

Սալէքը երկու շրջան ունի առաջին շրջանը նա է որ փոքր սպառձեւ ելուելով եւ Թեթեւ ջերմութիւնով եւ առանց ցաւի կ'սկսի եւ երթալով մինչեւ 4—5 ամիս քիչ քիչ կը մեծնայ, անկից յետոյ կ'սկսի երկրորդ շրջանը, այսինքն այդ ելուելը շարաւով լեցուելով պալարի բերանը կը բացուի եւ Թուի դեղնագոյն մի կեղեւով կը ծածկուի որ ընդհանրապէս ընկնելով կրկին կեղեւ կը կապէ եւ այս վիճակը կը շարունակուի մինչեւ 6—7 ամիս, այնպէս որ վերոյիշեալ ելուելը բարձրացած օրէն մինչեւ վերքի գոցուիւը կը տեւէ մէկ տարի, որից յետոյ խոռոչաւոր եւ խորունկ սպի մը կը Թողու:

Ահա այն դեղերի անուններն որոնք իմ քրոջ երկար փորձերէս վերջ ճարիր եմ, այնպէս որ այդ վերքը 14—15 օրէն բոլորովին կը լաւանայ, Այս դեղը ուրիշ մի առաւելութիւն եւս ունի, այն է որ վերքին Թողած սպին գրեթէ յայտնի չըլլար:

Հետեւաբար Սալէքի երկրորդ շրջանը այս սինքն պախարը բացուելով թարախը սկսելէն վերջը օրնական երկու անգամ առաւօտ եւ երեկոյ պէտք է դարձածել հետեւեալ դեղերը, նախ պէտք է վերքը լուալ մաքուր բամպակի կտորով մը հետեւեալ լուծաջուրով.

Հասարակ աղ 60 կրամ

Մաքուր ջուր 200 »

այս լուծաջրով (պէտք է ուշադրութիւն ընել որ աղը ամբողջապէս հալուի) լաւ մը լուալէ վերջ, նոյնպէս մի կտոր բամպակի վրայ հետեւեալ օժանելիքը քսելէն վերջ դնելու է վերքին վրայ եւ կապելու է,

Acide lactique 4 grammes

Vaseline blanche 20 »

Թէ որ վերքը այն տեսակ մի դեղ է որ կարելի չէ վերոյիշեալ եղբ բամպակ դնել, հետեւաբար կարելի է միայն անոր քսելով բաւականանալ:

Երախաների համար այս դեղերի խառնուրդները աւելի թիթեւ պէտք է ըլլան այնպէս որ աղի լուծաջուրը հարիւրին 15 բաւական է, նոյնպէս օժանելիքի **acide lactique**ը 2 կրամ պէտք է ըլլայ 20 կրամ **vaseline** ի համար:

**Ե. ՓԱՓԱՐԵԱՆ**

(Պատասխան Թէհրանի պէսական  
յեղագործական վարժարանի)

**ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆԵԱՆ**

Անցեալ տարի երբ Տարեցոյցս արդէն իսկ հրատարակ ելած էր, թերթերը գուժեցին այս հանճարեղ քերթողուհիին կոյրուստը (1927 Նոյ. 14):

Մեր մէջ ոչ մէկ կին հայ գրականութեան

ընծայած է այն հզօր ազդեցութիւնը, ինչ որ Տիկին Շուշանիկի քնարին փառքն է: Ան տառապանքի երգիչն էր: Ծնած է 1876ին Աղեքսանդրապօլ, սկըսած է գրել 1892ին Տարապշաբաթաթերթին մէջ եւ 1907ին Նոր Նախիջեւանի մէջ ի լոյս ընծայած է իր բանաստեղծութեանց անդրանիկ հատորը «Արշալոյսի Ղօղանջներ»: Ահա այս բեղուն կեանքին գլխաւոր գիծերը: Անոր բանաստեղծութիւնը սարսուռներով կը փոթորիէ սրտեր: Փաղաքուշ բառերով չարճնազարդեր իր մտքի յղացումները, այլ կարծես հայ շունչն է որ կը թրթռայ Տիկին Շուշանիկին տաղերուն մէջ: Անոր ազդեցութեան շնորհանակը շատ ընդարձակ է եւ իր մահով հայ մամուլին էջերուն մէջ յուզուած կարգապահներ անմահ տողեր անոր յիշատակին նուիրուած:



Տիկ. Շուշանիկ՝  
Կուրղիցեան

Ո՞վ անուշաբոյր Շուշանիկ, զրկուածներու գուժաղբ հովանի, որուն ներքեւ պիտի գանց հանդէլ տառապող հոգիներ, հսկայ հատորներ չեն՝ որ պիտի յաւերժացնեն քու պաշտելի անունդ, այլ քու մէկ քերթուածդ պիտի քանդակէ հայ սրտերու մէջ քաղցր յիշատակդ:



### Ա.Զ.Գ.ԱՅԻՆ, ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

Հ. Խորէն-Սինանեան, Մխիթարեան, ծնած Կուտինա 1868: Հագիւ տանամեայ Ս. Ղազար կուգայ, 1885ին սքեմաւոր եւ 1892ին քահանայ եւ ուսուցիչ (1893—96): Կ'անցնի Տրապիզոն իրը ուսումնապետ (1896—99), յետոյ երկու տարի Գատը գիւղի



Հ. Խորէն Վ. Սինանեան

Մխիթարեան վարժարանին մէջ պաշտօն կը վարէ: Անկէ Վննն-տշկ կ'երթայ Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանը: Վանքը զանի կը յղէ Բատուայի համալսարանը՝ որպէսզի զարգացնէ թըւարանական եւ աստեղագիտական գիտութիւնները, երկու տարիէ կը զառնայ նորէն ուսուցչութեան պարապելու, ու վերջապէս փակեց աչքերը Յունուարի մէջ:

ընդերկար նուիրուելով աստեղագիտութեան եւ այդ միւսին վերաբերեալ հմտալից յօդուածներ հրատարակելով **Քաղմալէպի** մէջ: Ինք մտերիմն ու թրդթակիցն էր Կ. Ճլամարտին:

Կը կնքենք այս տողերը իր միտքանակցին Հ. Եղիա Փէլիկեանի սրտառուչ վերջաբանով, — «Երջանիկ Հոգի, որ կ'գմայլէիր չքնաղ գիշերներու ծոցին երկնքի գեղով ու խորհուրդով, յագեցիր այդ երանութեան մէջ ուր ամէն զաղտնիք կը լուծուի. երանացիր նոր երկնքիդ անհուն արեգակին լոյսովն

ու տալով ու փայլէ անոր շուրջ պարող յաւերժայն համաստեղութեանց մէջ...»:

**Թէոդիկ**, հեղինակ Ամենուն Տարեցոյցներու ծնած 1873 Մարտ 5ին Սկիւտար, աշակերտած է ձեմարանի, յետոյ Պէրպէրեանի եւ ջերմապէս նուիրւած է Հայ գրականութեան՝ առեւտրական հրապարակի մէջ ըլլալով հանդերձ: 1907էն սկսաւ իր զլիւսւոր գործը եւ ցվերք շարունակեց 1916—1919 տարիներու ընդհատումով: Այդ անգուգական աշխատութեան տաժած բուն սէրն էր որ վերջապէս խըջեց իր կեանքը, կրնանք քսել թէ իր ծանրայեղ աշխատութեան զոհն եղաւ Թէոդիկ. Տարեցոյցը զինքը անմահացուց, Տարեցոյցը զինքը մեռցուց: Մեռաւ Բարիզ Մայիս 25ին:

**Հրակո Ասատուր**, գրական ժիր մշակ եւ փաստաբան, ծնած 10 Օգոստոս 1862ին Պոյաճը գիւղի մէջ. նախնական ուսումը կ'ստանայ տեղւոյն եւ Մեզպուրեան վարժարաններուն մէջ, յետոյ կ'աշակերտի Ռ. Գոյլէնի խոհեմ ժողովական եւ անխնջ բանասէրի Իր գործերն են «Պատանեկան ներշնչումներ» (1873), «Մահմանադրութիւն եւ հայ ժողովուրդ» (1879), «Բնդարձակ օրացոյցներ» (1901 2), «Դիմաստունները, Հայ թատրոնի պատմութիւն ընդարձակ օրացոյցներու մէջ», «Իմաստասիրական բառարան (ձեռագիր)», «Պատմ. աշխարհաբար մատենագրութեան (ձեռագիր)», եւն. եւն: Մեռաւ 5 Յունիսին:

Տարեցոյցիս անծուկ էջերը չեն ներեր վերջացող տարւոյն ամէն կորուստները ցոյց տալ, ուստի վը բաւականանամ յիշել զէթ մի քանի անուններ

միայն ինչպէս Արթուրակէս Պոյակեան, Քուարան  
 եւ հեղինակ, Իսրայէլ Հայկազն, նախկին ուսու-  
 ցիչ, Ներսէս Բինյ, Զիւմբիսեան, Ֆէրիզիզի  
 Ս. Վարդանանց եկեղեցոյ, ՆԵՐՍԷՍ ՔԷ, ՔԱՋԵՆՑ,  
 Գատըզիզի Ս. Թագաւոր եկեղեցոյ, Տիգրան ՏԷ  
 Ներսէսեան, նախկին գործակատար Ազգ. Դատ-  
 րիարքարանի, Գարուբիւն. Խան Պայտէրեան,  
 ձեռնհաս փաստարան, Ամբաստ Բեւեան հայ  
 թատրոնի աշխատատեղ, եւն եւն:

Հնրու մինչ Տարեւոյցս լոյս տեսած էր ար-  
 դէն. լրագիրներ գուժեցին կիւլպէնկեան Ներսէս ալի  
 որդւոյն դառն կորուստը. Այս բարեգործ գերզա-  
 տանին կրած վիշտէն ազդուած Ազգ. Դատրիար-  
 անը մասնակցեցաւ այդ սուգին՝ հոգեհանգստեան  
 պատարագներով: Ես եւս ի նշան համակրանքի ար-  
 կար գրիչս կը նուիրեմ վաղամեռիկ որդւոյն յիշա-  
 տակին, կանգնելով այս փոքրիկ մահարձանը:

**ՄՍ. ՀԱՐՉՍ. Ն**

**Քեղածաղիկ պատանեկին**

**Պօղոսի Ն. Կիւլպէնկեան**

«Պատրանք թէ երազ, ո՞ւր է իմ որդեակ,  
 Օր մ՝ դիտարեր իլեց այս քաղցր էակ.  
 Ղօյա՞նջ մահուան քեզ հրաւիրեց, հոգեակ:—  
 «Ո՛՛ջ. զիս հրեշտակներ տարին դէպ յերկին  
 Ս փոփուէ՛, հայր, քովս եմ մեծ մայրիկին»:

**Վ. Ն. Ր. Զ.**

«Ազգային գրադարան



NL0148384

13452